


ԽՏԱ



ԱՇԽԱՏԱՄԱՐ ԿԱՄՊԱՆԻԱ

Ա. ԳԵՐԻԼԱՆՅԱՆ

ԻՆՉՈՒ ԱՆ ՀՐԱԺԵՇՑ Ե
ԳԱՐՆԱՆԱՑԱՆՔԵՐԻ ՀԱՄԱՐ
ԱՇԽԱՏԱՄԱՐԿ ԿԱՄՊԱՆԻԱ



ԴԵՏՐՈՒՍ • 1931 • ՅԵՐԵՎԱՆ

ԱՇԽԱՆԱՀԵՐԿԸ ՄԱՐՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՅԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱ ՅԵ

ԴԵՄԻՔԱՄԻ ՄԱՊԱՐԱՆ
ԳԼԱՎՈՒԹ Ա 6965 (Բ)
ՀՐԱՄ. Ա 1860
ՊԱՏՎԵՐ Ա 5425
ՏԵՐԱԺ 2000

Կուսակցությունը և իշխանությունը բացառիկ ու-
շաղրաւթյուն են նվիրում աշնանահերկերի տարած-
ման և ընդարձակման գործին։ Անցյալ տարվա համե-
մատությամբ կրկնակի և յեռակի միջոցներով պետք է
ձեռնարկել աշնանահարկեր կատարելու գործին այս
տարվանից, այս աշնանից և մեծ չափերով ընդարձա-
կել այն։ Այդ և պատճառը, վոր ԽՍՀՄ-ի ժաղկոմիոր-
չը պահանջում է, վոր ԽՍՀՄ-ի Հողմողկոման այս
տարվա աշնանահերկի կամպանիան ղեկավարի արտա-
կարդ կերպով և այն հիմունքներով, ինչպիսի հիմունք-
ներով նա ղեկավարում եր բայլչելիկան 2-րդ գալնա-
նացանը։

Ինչո՞ւ։ Վորովհետեւ աշնանահերկի կատարումով,
դարնան ամիսներին ցանքսի աշխատանքալին ծախսում-
ները կրճատվում են ավելի քան $\frac{2}{3}$ -ով, «Վորովհետեւ
աշնանահերկի կատարումը դառնում է դարնանացանի
հաղթանակի բանալին», վորովհետեւ աշնանահերկերի
քանակական և վորակական կողմով՝ կանխորոշվում ե
հաջորդ տարվա բերքը, վորովհետեւ ագրոտեխնիկակական
ժյուս բոլոր ձեռնարկություն, սելեկցիա և այլն) հետ միասին,
բացառիկ և, հոգի մշակության լավագույն միջոցի—աշ-

նաևահերկի դերը, այս 5-ամյակում 35 տոկոսով
բերքատվությունը բարձրացնելու առքիվ հանված ԽՍ
ՀՄ կառավարության վորոշումը՝ տմենակարն ժամա-
նակամիջոցում իրականացնելու տեսակետից :

Անցյալ տարի ԽՍՀՄ-ի մեջ ընդամենը 24 միլիոն
25 հազար հեկտար աշնանահերկ կատարվեց : Այս տա-
րի պետք է կատարվի 42 միլիոն հեկտ. աշնանահերկ :
Մի տարվա մեջ աճումը կը կնակի յե : 42 միլիոնից 36
միլ. կատարվելու յե կոլխոզներում անցյալ տարվա 10
միլ. հեկտարի դիմաց :

Իսկ մեզ մոտ, Խորհրդ Հայաստանում, այս տարի
կատարվելու յե 160000 հեկտ. աշնանահերկ անցյալ
տարվա 40000 հեկտարի դիմաց :

Բերված միջանի թվերից յերեվում ե ,թե մի տար-
վա ընթացքում ինչպիսի չափերով ե աճելու աշնանա-
հերկի տարածությունը : Հետևապես նրա կատարման
և գերակատարման համար, պահանջվում ե վոր ամեն
մի Մեք . Տրակտ. կայան, սովխող ու կոլխոզ, ինչպես
և կոլխոզին ողնող ե կուլակի դեմ պայքարող չքավոր
և միջակ անհատ գյուղացին աշնանահերկի գործին ձեռ-
նարկեն ու լծվեն բայլչեվլիկորեն : Աշնանահերկի պլան-
ների կատարման դործում մասնակորապես ամենասպա-
տառիսանատու դերն ե վերապահված ՄՏԿ-ներին : ԽՍ
ՀՄ-ի աշնանահերկի պլանի 1/3-ից ավելին ընկնում ե
ՄՏԿ-ին, մոտավորապես 15 միլ. հեկտ. : Իսկ մեզ մոտ
Խորհրդ Հայաստանում՝ կատարվելիք 160000 հեկտ.
աշնանահերկից, 30000-ը կատարելու յեն մեր 4 մեքե-
նատրակտորային կայանները : Այս նորատակի համար ե
ահա, վոր ԽՍՀՄ-ի Հողժողկոմատը վորոշել ե աշնանա-

հերկի համար ոգտագործել ամբողջ տրակտորային պար-
կի 65-90 տոկոսը, իսկ ձիերի՝ 25-30 տոկոսը : Նույն
վորոշմամբ Խորհրդային Հայաստանում տրակտորների
75 տոկոսից վոչ պակաս, մինչեւ դեկտեմբերի 1-ը, ոգ-
տագործելու յեն բացառապես աշնանահերկերի կատար-
ման գործում :

Սովորողներն ինչպես միշտ, այս կամ պահնիայի ըն-
թացքում ևս, պետք է ցուցաբերեն իրենց ավանդաբարդի
դերը : Առաջավոր ազգայտեինիկայի գործադրմամբ,
նրանք վոչ միայն պետք ե կատարեն իրենց աշնանահեր-
կերի պլանները, այլև աշխատանքի բայլչեվլիկայն տեմ-
պերով վարակեն և մղնեն հարեան կոլխոզներին և չքա-
վոր ու միջակ անհատական աշխատավոր գյուղացինե-
րին իրենց պլանների կատարման գործում :

Ինչքան ՄՏԿ-երը, սովորողներն ու կոլխոզները,
շուալ, սուանց ժամ անդամ կորցնելու, կարմեն իրենց
աշնանահերկի որացուցային պլանները և ըստ այնմ դա-
սավորեն իրենց բանվորական, մեքենայական և քաշող
կենդանի ուժերը, ինչքան չուտ սկսեն աշնանահերկը,
ինչքան շատ և լավվորակ աշնանահերկ կատարեն, այս-
քան հաջող կլինի բայլչեվլիկայն Յ-ըդ դարնանացանը,
այնչափ կմեծանա սովորողների և կոլխոզների արտա-
դրական և տնտեսական բազման, այնչափ կաճի նրանց
ապրանքայինությունը և հսկայական չափով կրարելավ-
վի աշխատավոր մասսայի տնտես . զբությունն ու կուլ-
տուր—կենցաղային պայմանները : Մյուս կողմից ել,
ավելի ու ավելի համոզիչ կդառնա չքավոր ու միջակ
այսորվա անհատական, բայց վաղվա կոլխոզնիկ, դյու-
ղացուն, վոր իր տնտեսական դրության լավացման և
կուլտուրական կյանքի բարձրացման համար, կա միայն

մի յելքասարադացնի իր մուտքը կոլխող և աշխատանքի սոցիալիստական ենտուզիազմով, սոցմրցմամբ և հարվածայնությամբ ձեռք ձեռքի տված աշխատի ներկայիս տաճայիկ միլիոնավոր կոլխոզիկների հետ:

Բայց վոչ մի բողեք չպետք ե մոռանալ, վոր դասակարգային թշնամին—կուլտակն ու նրա իդիոլոգիան արտահայտող դաշնակը, աշխատելու յեն տապալել այս կամպանիան, ուստի նրանց ընդդիմազրությունը տեղն ու տեղը խորտակելը, աշնանահերկի պլանների կատարման նախապայմաններից մեկն ե:

Պետք ե նկատի առնել նաև մի շատ կարեվոր հանդամանք, դա այն ե, վոր աշխանահերկերի աշխատանքներին զուգընթաց կատարում և կատարելու յենք մի շարք այլ աշխատանքներ (հացահատիկների և այլ կուտուրաների բերքահավաքը, կալսելը, հացամթերումը, աշնանացանքը, դաշտավայրում՝ բամբակի և այլիների բերքահավաքը, բերքի փոխազրությունները և այլն), վորոնք նույնպես պահանջելու յեն թե մարդկային և թե քաշող ուժ։ Միանդամայն սպասելի յե, վոր այ ոպղորայունիզմը հանդես է գալու (ինչպես մի շարք տեղերում նա հանդես է յեկել) ամբողջապես «որդեկահիկ դժվարությունների» գրոշակը ձեռքին, թե՝ «այսքան աշխատանք միանգամից տանել չել լինի, ուժ չկա», թե «նախ պետք ե մեկը վերջացնել, հետո սկսել մյուսը։ Ամեն ինչ հերթով պիտի լինի» և այլ և այլն նման շատ արտահայտություններ։

Երջանային կուս և՝ խորհրդային մարմիններն անհասլաղ պետք ե մոբիլացիայի յենթարկեն դյուլական բոլոր կազմակրեպությունները, արթուն լինելու և ժամանակին պատռելու աջ ոպղորայունիզմի դիմուին և մեր-

կացնելու ամենաանխնա հարվածներով նրա՝ աշխատանքները «հերթականորեն» կատարելու, քարացած «տեսությունը»։

2. ԽՍՀՄ-ի ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆՆ Ե ԱՇԽԱՐՀՈՒՄ:
ՏԻՐԱՊԵՏԵԼ ԱԳՐՈՆՈՄԻԱՅԻՆ ՅԵՎ
ԱՌԱՋԱՎՈՐ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱՅԻՆ

Համ. Կ(բ) Կ. ԿԵՆՏԱԿՈՒՄԻ ՀՃՈՒՄ ղեկավարությամբ անհաշտ պայցքար մղելով դասակարգային թշնամու, ինչպես և աջ ու «ձախ» ոպղորայունիզմի դեմ, ողովետարական դիկտատուրայի յերկիրը, թե յերկիրի ինդուստրացման և թե գյուղանտեսության սոց. վերակառուցման ուղղությամբ ձեռք ե բերում մեկը մյուսի յետեցից նորանոր նվաճումները։ Յերկրի ինդուստրացման չնորհիվ, Խորհրդ. Իշխանություննը վերջին տարիների ընթացքում արտադրական և այլն նյութական միջոցներով հսկայական չափերի համար անհակություն ցույց տվավ գյուղին, գյուղատնտ. սոց. վերակառուցման գծով։ Զանազան բնույթի կատարելազործված գյուղատնտեսական մեքենաները, ինչպիսիք են՝ տրակտորները, կոմբայնները և այլն, տասնյակի միլիոնալոր փթթություն տարեկը տեսակի պարարտանյութեր, զանազան բիոլոգիկ լավացրած սերմացուներ, մեկ միլիարդ և 50 միլիոն ոռորդու կարճատև և յերկարտեկվարկ, կոնտրակտուցիոն ավանսավորում և այլն, ահա պրոլետ-պետության աջակցության ցուցանիշները։

Չե վոր հանաք բան չեր, յերբ այս գարնանը ԽՍՀՄ-ի 1245 ՄՏԿ-երի 600000 ձիու կարողությամբ, 42000 տրակտորները դղրդացնելով, վարեցին և ցանեցին խոր-

Հըրդային դաշտերից 20 միլիոն հեկտար, պլանով նախատեսված 18 միլիոնի դիմաց :

Չե վոր այս տարվա սկզբին կոլխոզների (վորոնք արդեն ընդդրկել են 31 թ. սեպտեմբեր. ԽՍՀՄ-ի վրզ աշխատավոր գյուղացիության 60 տոկոսը) և սովորողների ձեռքի տակն եր գտնվում է ԽՍՀՄ-ի 31 թ. աշանացան և գարնանացան 137 միլիոն հեկտարից՝ 92 միլիոնը, այսինքն՝ ընդհանուր տարածության $\frac{2}{3}$ -ից ավելին, իսկ թեթեվ արդյունաբերության հումքի բազան հանդիսացող և յերկրագործության վողնաշարը կազմող հիմնական կուլտուրաների—հացահատիկների և տեխնիկական կուլտուրաների ասպարիզում, գյուղի սոց. սեկտորը գրավում ե ել ամելի բարձր տոկոսներ : Այսպես որինակ՝ սովորողներն ու կոլխոզները 31 թ. ցանել են—

ԽՍՀՄ-ի ցորենի տարածության	80,9	տոկոս
Արեամագիկի	88,2	>
Ցեղիպտացորենի	75,0	>
Բամբակի	74,0	"
Շաքարի ճակնդեղի	73,3	>
Վահի	58,0	>

Այսինքն՝ ընդհանուրի 74,9 տոկոսը, մոտավորապես $\frac{3}{4}$ -ը սոց. սեկտորի ձեռքումն ե :

Այժմ արդեն անհատական սեկտորի դերը դառել և յերկրորդական :

Նույնպիսի նվաճումներ ունենք նաև անասնապահության բնադրավառում : Այս յերկու տարվա մեջ կաղմակերպված զանազան բնույթի միքանի տասնյակ հազար խոշոր անասնապահական սովորողների և կոլխոզների հոտերն ու նախիրները բռնել են տասնյակ միլիոնավոր հեկտար տարածություն :

Աշխատանք ու պայքար՝ ահա հաղթանակի միասնական պայմանը : Սովորող և կոլխոզ շինարարության անընդհատ ծավալում, անհատական սեկտորի բաժնի անշեղ նվազում, համատարածի հիման վրա կուլակության՝ իրեւ դասակարգի վերացում—ահա! հաղթանակի ուղղությամբ ձեռք բերած խոշոր նվաճումները :

Այսպես ուրեմն, կոլխոզներն ու սովորողները այսոր իրենց տրամադրության տակ ունեն հսկայական չափերի համար համատարած հողամասեր, պատճեռելի մեքենայական և կենդանի քաշող ուժ, մեծ քանակությամբ արտադրական և այլ նյութական միջոցներ ու հնարավորություններ և վերջապես կաղմակերպված միլիոնների հասնող աշխատավորական ձեռք, վորը գործի յեղանում վերև թված միջոցները : Հարց ե ծաղում . սոցիալիստական այս գիզանաները կա՞րող են յերկրագործության արտադրությունը տանել այն սիստեմով ու այն ձեկիրով, վորը մանր, անհատական տնտեսություններին և հատուկ : Յերկրագործության այս դիգանաները, կա՞րող են ագրոտեխնիկական ամենազդիչավոր միջոցներից մեկի—հողի մշակության հարցերին նայել այնպես, ինչպես վարդում եր մանր, անհատական տըստեսությունը : Հողի մշակության իր ձեկիրով, մանր անհատական դյուլացին, պարբերաբար ջուր եր լեցնում եր դժբախտության ջրաղացին : Գյուղատնտեսական փորձակայանները հաստատապես ապացուցել են, վոր Ռուսաստանում հաճախակի տեղի ունեցած յերաշները՝ իրենց ծայրահեղ չափով ու անբերրիտությամբ, հետեւյանք եյին հողի վոչ ուացիոնալ մշակության : Զե՞ր վոր 1891, 1911 և 1921 թ. ամենայերաշտուտ տարիներին, փորձագաշտերը հեկտարից 20-30 վորթ ցորենի

բերք ելին ստանում, յերբ հենց այդ նույն փորձադաշտերի կողքին ընկած գյուղատնտեսական ցանքսերը խանձվում, մոխիր ելին դառնում:

Բայց վոր մանը, անհատական գյուղացին այլպիս վատ եր վարվում հողի հետ և այդպիսի սոսկալի հետեւ վանքներ ստանում, դա վոչ այնքան նրա կամքից եր կախված, վորքան շահագործող հասարակական կարգերից և հենց իր, մանը, խղճուկ տնտեսության բնույթից ու անողնականությունից:

Սովորող և կոլխոզ գիգանտների հերոսները հնէ պես վարվել չեն կարող. նրանց վիճակված ե ամենակարն ժամանակամիջոցում բայց շվիկյան համար աշխատանիվ, զյուղատնտեսական գիտությանը և առաջալոր ագրոտեխնիկային տիրապետելու գործին ձեռնարկել:

Սովորողների և կոլխոզների արտադրական-նյութական այն վիթխարի բաղան, վորի մասին աշացինք, ստեղծել ե լայն հնարավորություններ խորտակելու և արմատապես վոչչացնելու յերկրագործական արտադրության հինգմանը, անհատական տնտեսությանը հատուկ՝ ձեվերն ու տրադիցիաները, բայց յերկրագործության հինգմանի դեմք չես կարող կովել. առավել ևս նրան վոչնչացնել, յեթե խարխափում ես տղիտության մշուշում, յեթե բայց լինիկյան տոկունությամբ և հաստատակամությամբ չես սկսում յուրացնել դյուղատնտ. գիտության հիմունքները և տիրապետելու ազգութեանի կային:

Իսկ յուրացնել գյուղատնտ. գիտության հիմունքները և տիրապետել առաջավոր ազգութեանի կային՝ նշանակում ե . . .

1) Լավ ճանաչել մեր կուլտուրական բույսերը և մասնավորապես հիշողության մեջ վառ պահել, վոր բույսն ապրելու, զարգանալու և բարձր քերք տալու համար՝ յերկրագործի առաջ միանգամից դնում ե 5 պայման—լույս, ջերմություն, ոդ, ջուր և սնունդ՝ նպաստավոր չափերով :

2) Բաղմակողմանի ճանաչել հողը և գործադրել ագրոտեխնիկայի (հողի մշակում, պարարտացում, ցանքսաշրջանառություն և այլն) այնպիսի միջոցներ, վորոնք կյանքի կոչեն հողի մեջ տեղի ունեցող փեղկեական, քիմիական և բիոլոգիական պրոցեսները: Հողի մեջ կուտակել ոդ, ջուր և սնունդ, վորոնք այնքան անհրաժեշտ են մեր կուլտուրական բույսերի համար:

3) Ճանաչել մեր կուլտուրական բույսերի յերկու բանակի բյուրավոր թշնամիներին—մոլախոտերին և վնասատուներին, ինչպես և տիրապետել նրանց դեմ պայքարելու հատու միջոցներին:

Յուրացնելով այս բոլորը և ամեն մի գործը կատարելով իր ժամանակին, մեր կուլտուրական բույսերը նըսպասառավոր պայմաններ գտնելով հողում, կպարզանան նորմալ և արագ կերպով ու առատ ել բերք կտան մեզ:

Հոդի ռացիոնալ մշակությունը, ազրութեանի կայի գլխավորագույն հարցն ե, իսկ հոդի ռացիոնալ մշակության բոլոր ձեվերի մեջ, աշնանահերկը բռնում ե ամենաաշին տեղը: Բայց թե ինչո՞ւ աշնանահերկը բռնում ե առաջին և այն ել ամենաաշնանահերկը տեղը և վոչ թե 2-րդ տեղը, այդ ե հենց, վոր ցույց պիտի տրվի այս բրոցյուրի հետագա գլուխներում:

Այն ել ասենք, վոր «աշնանահերկ» ասելով, այս բրոցյուրում, մենք նկատի ունենք, վոչ թե նրա բոլոր

տեսակները, այլ նրա մի տեսակը—ձմեռող հերկը (ՅԱ-
ԼԵՎԱՅ ԵՎՈԱՌԿԱ) այսինքն գարնանացան բույսերին
հատկացնելով այն հերկը, վորը կատարվում է ողոսու-
սին կամ աշնան ամիսներին՝ լրիվ խորությամբ և ա-
ռանց փոցինելու կրում և իր վրա աշնան, գարնան և
մասնավորապես ձմռան ազդեցությունները, իսկ վաղ
դաշնանից, նրա վրա տարվում են մնացած նախապատ-
րաստական աշխատանքները (փոցի, մարգերի պատ-
րաստումն և այլն) ու այդ ձևով նախապատրաստված,
հասունացած, լավ հատություննիր ձեռք բերած հողի
վրա, կատարվում և դարձնանացնեսը:

3. ԱՆԱՆԱՀԵՐԿԸ ՀԻՄՆԱԿԱՆ ՆԱԽԱՊԱ- ՏԱՆՆ Ե ԳԱՐԱՆԱՅԱՆՔՍԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Այն բնորոշումից հետո, վոր տվինք աշնանահեր-
կին, ել առանձին դժվարություն չկա ցույց տալու, վոր
իսկապես աշնանահերկի կատարմամբ, գարնան ցանքսի
աշխատանքները պահասում են ավելի քան 60-70 տոկո-
սով, վորպիսին վճռողոկան նշանակություն ունի գար-
նանացանքը ժամանակին սկսելու և ժամանակին ա-
վարտելու տեսակետից:

Այսպես որինակ՝ 32 թ. գարնան պետք է ցանենք
53000 հեկտար բամբակ: Այսինքն՝ բամբակի տարածու-
թյունն ընդարձակելու յենք յերկու անգամ: Բամբակի
ցանքսի համար պահանջվում է կատարել հետեւյալ
հիմնական աշխատանքները՝ հողի վարելը, պարարտաց-
նելը, փոցինելը, մարգուելը, ցանելը, ջրելը և տափե-
լը: Պարզ է, վոր մենակ հողի վարելը բամբակործա-

կան չըջաններում, կլանում և տրակտորների և կենդանի
քաշող ուժի զգալի մասը: Հետեւպակես աշխատանքի
այդ մասի փոխաղբումն աշնան ամիսներին, վորը հնա-
րավոր է ու գյուղատնտեսական գիտության տեսակե-
տից՝ միանգամայն անհրաժեշտ—բամբակի ցանքսի
հաղթանակի տեսակետից ունի խոչըրագույն նշանակու-
թյուն: Մեզ կարող են ասել, վոր մարգուի և սերմեր
ցանելու համար բավականաշափ մարդկային ձեռք և
պահանջվում գործադրել: Դա ճիշտ է, բայց վոռ լիո-
վին, վորովհետեւվ գարնանացան կուլտուրաների վարի
կատարումն ամուսն վերջներից և աշնան ամիսներին, վոչ
միայն հետավորություն և տալու ցանքսերի տարածու-
թյան ընդարձակմանը, այլ և խոչըր չափով նպաստելու
յե գյուղատնտեսական այլ աշխատանքների մեխանիզա-
ցիային: Դրա չնորհիվ մեր կոլխոզներն ու սովորզները
հնարավորություն կունենան ծավալելու տրակտորի և
ձիան շարքացանը, տրակտորների ողնությամբ՝ մար-
դուսի աշխատանքների կատարումն և այլն, վորոնք ևս
իրենց հերթին նպաստելու յեն ցանքսի աշխատանքների
արագացմանը և ժամանակին ալվարտելուն:

Մենք գիտակցաբար վերցրինք իբրև որինակ, բամ-
բակագործական չըջանի գարնան ցանքսի աշխատանքը,
վորովհետեւվ բամբակի մշակությունը բավական ուժեր և
պահանջում: Ինչ վոր ասլեց բամբակի ցանքսի մասին,
նույնը, միայն վորոշ (բայց շատ չնչին) տարբերու-
թյուններով վերաբերվում և մյուս տեխնիկական կուլ-
տուրաների ցանքսին: Որինակ՝ շաքարի ճակնդեղին,
ծխախոտին և այլն: Բոլոր դեպքերում ել վարի փոխա-
ղբումն աշումն, կրծատելով գարնան ամիսներին ցանքսի
համար պահանջվող աշխատանքները, հսկայական չա-

փով նպաստում և ցանքսերի տարածությունների ընդուրմաժամկեր, գյուղատնտեսական աշխատանքների մեխանիզացիային, գարնանաշամի ժամանակին ավարտելուն, հետեւապեր և բերքատվության բարձրացմանը: Ել չենք խոսում մեր նախալեռնային և լեռնային ըրջանների մասին, ուր դաշտավարությունը տարվում է անջըրտի պարմաններում, իսկ ջրովի վայրերում տիրապետում է առավելապես ջրելու ակոսային սիստեմը, վորի չնորհիվ այդ ըրջանները մեծ մասամբ աղատված են մարդկեր պատրաստելու հօգսից, վորը բավական աշխատանք կլանող գործ են մեքենայացման բացակայության պայմաններում:

Միանդամայն ակնհայտնի յե, վոր աշնանահերկի կատարմամբ, չափաղանց թեթելացնում ենք բամբակի, չաքարի ճակնդեղի, ծխախոտի, խոտաբույսերի և սիրոսարույսերի, ինչպես և հացահատիկների գարնանացանի պլանների կատարման և գերականարման աշխատանքները:

Ի հարկե կդանվին մարդիկ, վորոնք այսպիսի դատողություններ կանեն՝ «ԵՇ», ի՞նչ կա վոր, աշնանահերկի պլանի այս ինչ մասը չկարողացանք կստարել, դարնան սիրուն և կանաչ որերին կկատարենք»: Այդպես դատող մարդիկ դիտակցաբար, թե անդիտակցաբար, ողնում են դասակարգային թշնամուն—կուլտիկն, նրա այն պայքարում, վոր նա տանում և աշխատելու յե տանել, աշնանահերկի պլանների կատարման աշխատանքները կաղմարծելու ուղղությամբ: Բայց ամեն մի կոլխոզնիկ ու սովորողնիկ, ինչպես և նրանց ողնող անհատական չքավոր և միջակ գյուղացին, պետք ելինեն անողոք, դատակարդային թշնամու և նրա ագենտության վերա-

բերմամբ, իրենց պարզ հաջիվ տան և գնահատեն այն մեծ ոգուտը, վորը ձեռք ենք բերում աշնանահերկի չնորհիվ նախ և առաջ դարնանացանքն իր ժամանակին կատարելուց: Գարնանացան կուլտուրաների նորմալ դարդացումը և բարձր բերքատվությունը կախված է ցանքոը ժամանակին կատարելուց: Այսպես որինակ, միջն Ասիայի մեր բամբակագործական կայանները հաստատում են, վոր մայիսի 10-ից հետո ցանված բամբառ մարդությունը մեծ չափերով ընկնում է: Այս կի բերքատվությունը մեծ չափերով ընկնում է: Այս թվուր: Ցերպանի գաշտում բամբակի բերքը մեկ հեկտարից ցենտոներով՝

Մայիսի վերջերին ցանվածը	16,0	ցենտը (100 փուլ)
Մայիսի 10-ին	13,6	(83 ,)
Մայիսի 20-ին	10,4	(63 ,)
Մայիսի 30-ին	8,8	(54 ,)

Մայիսի վերջին ցանած բամբակի բերքը յերկու անգամ քիչ և ամրելի վերջերին ցանած բամբակի բերքից: Ուշ ցանքսի գեպքում բամբակի թշելի վորակն ել և ընկնում, վորովհետև նա ուշ և հաստանում, նրա կնդուղների զգալի մասը յենթարկվում և աշնան ցրտահարման («շախտա»):

Մարատովի հացահատիկային տնտեսության ինստիտուտը բաղմաթիվ փորձերով հաստատել է, վոր գարնանացան ցորենների 6-7 որով ուշ ցանելը, հավասարագոր և ընդհանուր բերքի 14-17 տոկոսից զրկվելուն:

Բացի դբանից, աշնանահերկը թեթելացնելով դարնանացանքն աշխատանքները, ավելի մեծ հնարժավորություն և ստեղծում, թե ցանքսի որերում և թե ցանքսից հետո, հարկ յեղած դեպքում տանելու ցանքսի խնմաքի հետագա աշխատանքները— կուլտիվացիան և նորա-

շումն , վնասատուների դեմ պայքարելը , և այլն , զորոնք նույնպես հակայական նշանակություն ունեն բերքատվության բարձրացման համար :

Այսպես ուրեմն՝ «Ժամանակն այսուհե վնասում և բերքի բախտը : Աշխանահերկն ել վնասում և ժամանակն» :

Աշխանահերկը հնարավորություն և տալիս մեղ դարնացանքը կատարել իր ժամանակին , իսկ ժամանակին կատարված դարնանացանի բերքը միշտ ել բարձր և լինում :

Բայց մեր դարնանացանների բերքը մենակ ցանքսի ուշցումից չե , վոր ցածր և լինում : Նրանց բերքառվությունը շատ ցածր և լինում նաև այն պատճառով , վոր դարնանացանների հողամասերն աշխանից հերկելու փոխարեն՝ վարել են սկսում միայն դարնանը և մի քանի որից հետո , անպատճառութ , գեռ հոգամասը չասունացած՝ հատկացնում դարնանացան այս կամ այն կուլտուրային—բամբակին , խոտարույսերին , սիլոսաբույսերին , հացահատիկներին և այլն : Պարզ չե մի՞թե , վոր այսպես մշակված հողից դժվար ե ցարձր բերք սպասել : Մեր դարնանացան կուլտուրանների բերքառվությունը թուիչքներ կդորձի , յեթէ ցանքսը ժամանակին կատարելուց դատ , հողն ել վարդած լինի իր ժամանակին , այսինքն՝ յեթէ աշխանահերկ և կատարված և ցանքսի հետագա խնամքն ել ապահովված :

4. ԱՇԽԱՆԱՀԵՐԿԻ ԱԳՐՈ-ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԽՈՇՈՐ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մի անդամ թվել և այժմ ել կրկնում ենք , վոր յեթէ կամենում ենք մեր կուլտուրական բույսերից բարձր բերք ստանալ , ապա նրանց պետք ե տրամադրել ան-

հրաժեշտ չափով լույս , ջերմություն , ող , ջուր և մառնիք : Սրանք բույսերի կյանքի ֆակտորներն են : Առանց այս բույրի միաժամանակ ներկայությանը , վոչ բույսը կզարդանա և վոչ ել մեղ բերք կտա : Յեթե այս չինդ ֆակտորներից մեկն ու մեկից դրկենք բույսին , հասկանալի յի , վոր նա չի կարող զարգանալ և դատապարտված ե անխուսափելի կործանման՝ ամենակարծ ժամանակամիջոցում :

Այս հինգ ֆակտորներից յերեքի վրա-ողի , ջրի , սննդի , մեր աղղեցության հնարավորությունները չափազանց մեծ են : Ժամանակակիցից աղղոնոմիան սովորեցրել և սովորեցնում ե մեղ , վոր հողի ուսցիոնալ մշակությամբ՝

ա) Կարող ենք անհրաժեշտ քանակությամբ ջուր կուտակել և սպահել հողի մեջ հետաղայում ցանկող մեր կուլտուրական բույսերի պահանջը բավարարելու համար :

բ) Հնարավոր և հարստացնել հողն որդանական նյութերով (բուսական մնացորդներ , մոլախոտեր , և այլն) վրանք քայլայվելով՝ լավացնում են հողի ֆիզիքական կազմությունը (կնծիկային ստրոկատուրա) և հետևապես նաև նրա Փիզիքական հատկությունները : Նրա շնորհի հողի մեջ շատ ջուր և մանում , տեղի յի ունենում ողի առաջ փոխանակություն հողի շերտերի և ատամառների միջև , վորն այնքան անհրաժեշտ ե և՛ բույսերի արմատների չնչառության և՛ միկրոօրգանիզմների (բակտերիաների) գործունելու ունենալ ակտիվացնելու և՛ հողում զանազան տեսակի միացնելուներ առաջացնելու և քայլայվելու հետապնդություն :

Զմոռանանք առաջանական հյութերով

Հարստացած հողի ջերմային պայմաններն ել փոխառմ են, նա առկելի շատ ջերմություն է կլանում: Իսկ այս բոլորի հետեւանքով՝

գ) Հողում վորոշ ժամանակից հետո կուտակվում են ահագին քանակությամբ սննդանյութեր՝ թե հողմահակման ճանապարհով և թե միկրոօրգանիզմների գործունեյության հետեւանքով:

Բայց հողի ռացիոնալ մշակությունը, այսինքն աղբատեխնիկայի այդ ամենասպասվոր միջոցը, անզոր չեմեր կուլտուրական բույսերի պահանջները բավարարել լույսի և ջերմության տեսակետից: Ճիշտ ե, նրանց քանակականություննավերացնել չենք կարող, բայց վորմեր կուլտուրական բույսերին կարող ենք շատ լույս մատակարարել և հողը համեմատաբար տաքացնել, դա յել անկատածելի յե: Զե՛ վոր, յերբ հողի մշակության միջոցով վոչնչացնում ենք մոլախոտերը, վորոնք հաճախ իրենց համատարած ստվերի տակն են առնում (անչնորք և անժամանակ մշակության չնորհնիվ) մեր կուլտուրական բույսերը, դրանով իսկ հոկայական չափերով ավելացնում ենք վերջնեներիս լույսի բաժինը, իսկ ջերմության մասին արգեն ասվելոց քիչ առաջ:

Եթե մեր կուլտուրական բույսերի նորմալ զարդացումն ապահովելու համար, հանձննա հողի ռացիոնալ մշակության, մենք ունենք հողը մի միջոց, ապա տեսնենք, այդ նորմալ զարդացումն ապահովելու, հետեւապես և քերքատիվությունը բարձրացնելու համար, հողի ռացիոնալ մշակության մի միջոցը, բայց ամենապահպահ միջոցը-աշնանահերկը, ինչ չափով և կատարում իր այդ պարտականությունը:

Ա. ԱՇԽԱՆԱՀԵՐԿԻ ԽՌԱՎՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՏԱԿԵԼՈՒ ԱՄԵՆԱԱԼԱՎԾ ՄԻՋԱՑՈՅՆ Ե

Զուրը բույսի կյանքի հիմք պայմաններից մեկն ե: Առանց ջրի բույսը սնվել չի կարող: Նա կարող ե իր արմատների ովնությամբ հողից վերցնել միայն այն սնունդը, վորը լուծված ե ջրի մեջ, յեթե հողի մեջ ջրի քանակը պակաս ե լինում, ապա բույսերի յերաշտին յենթրակվելը, վեր ե ամեն մի կառկածից:

Մեր նախալեռնային շրջանները (Կոտայքը, Յեղվարդը և լին) տյյտ շատ լավ գիտեն:

Թի ինչ աստիճանի մեծ ե բույսերի պահանջը ջրի նկատմամբ, բերեք միայն մի որինակ: Վորպեսզի բամբակենին մի գրամ չոր նյութ պատրաստի, պետք ե գործազրի 720 գր: Չորր: Վորպեսզի մեկ հեկտարից բամբակենին մեր առ 3½ տոնն (տոնն 61 փութ ե) չոր նյութ, վորից 1,1 տոնն բամբակ, իսկ 2,4 տոննը՝ չոր բացրած՝ ցողունները, տերեվները և արմատները, ապա բամբակենու տրամադրության տակ պետք ե 2670 տոնն կամ 160 հազար փութ ջուր լինի: Նույնը, ավել կամ պակաս չափերով, վերաբերիվում և նաև մյուս բույսերին:

Պորհրդացին Խշանությունը հոկայական գործ և կատարել և կատարում ե վոռոգման ցանցի ընդարձակման ուղղությամբ (Սարգարագդի, Շիրակի, Այզրի լճի ջրանցքները, բաղմաթիվ ջրմուղ պոմլուեր՝ Ղուբդուղուլում, Արարդայանում, Արագսի վրա և այլն):

Բայց վոչ միայն մեր նախալեռնային և լեռնային շրջաններում, այլև մեր վոռոգվող բամբակացան շրջաններում, բավարարվել միմիայն վոռոգող ջրերով, համարավոր չե:

Մեր շատ շրջաններում ջրի պակաս ենք զգում։ Շատ շրջաններում, թե վոռողող ջրերն են քիչ և թե մթնոլորտային տեղումները (ձյուն, անձրեւ և այլն)։ Այսպես որինակ, մեր բամբակակաղործական շրջաններում մթնոլորտային տարեկան տեղումները 280-350 միլիմետրից դեմք չենք անցնում։ Այդ տեսակիտից միխիթարական չեն նախալեռնային շրջանների դրությունը, ուր դաշտավարությունը տարվում է զիմավորապես անջրդի պայմաններում։

Բայց սա յել դեռ բավական չե։ Այդ շատ քիչ քանակությամբ տեղումներն ել, թափվում են այդ շրջաններում, վոչ թե ամառը, այլ տարվա մյուս յեղանակներին։

Մեր նախալեռնային և դաշտային շրջանների գյուղացիները շատ լավ գիտեն, վոր հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին թվածու շրջաններում, տեղումները հազվադյուն յերեւութենք են, իսկ յեղածներն ել կարծառել և իրենց հետեւանքով հաճախ՝ ուղղակի վնասակար (կարկուտը, չորդ անձեռվիլ յերակը և այլն)։

Իսկ ում հայտնի չե, վոր հենց այդ ամռան ամիսներին ե, վոր մեր բոլոր շրջաններում, թե մեր տեինիկական կուլտուրաները, թե մեր խոտաբույսերն ու հացահատիկներն իրենց աճման և զարգացման ամենալարված, ամենալրիտիկական շրջանն են անցկացնում։ Այդ շրջանում նրանք ջրի շատ մեծ կարիք են զգում։ Կոնտրաչովի տվյալների համաձայն, մեր Արեվելյան թուրքեստանի բամբակակաղործական նուկուսի շրջանում ամռան ամիսներին հողից գոլորշիացող ջրի քանակությունը 70, իսկ Տուրքուլու շրջանում գորոշ տարիների ամռան ամիսներին, մինչեւ իսկ 270

անգամով շատ և լինում այդ ամիսներին թափանակած տեղումների ընդհանուր քանակից։ Քիչ դեպքեր չեն պատահում, յերբ այդ ամիսներին մեր անառնապահության զարգացման համար այնքան մեծ նշանակություն ունեցող խոտաբույսերը խանձվում են մեր նախալեռնային շրջաններում։ Այս վճռական շրջանումն ե, ահա, վոր մեր բոլոր բույսերը ջրի շատ մեծ կարիք են զգում։ Ավելորդ ե այդ շրջանում դաշտում կանգնելու և բռյուի ջրի պահանջը բավարարելու համար անամապ յերկնիքից ջուր սպասելու։ Բույսի այդ շրջանի պահանջը նկատի առնելով հողում պիտք ե սկսել ջուր կուտակել այն ժամանակվանից, յերբ այդ ջրերը շատ են և առատ։ Իսկ այդ բանին մենք կմրող ենք համեմել մեր գարնանացանների հողամասը ժամանակին վարելով, այսինքն աշնանից և վոչ թե գարնանից։ Բերքահագարքից մինչեւ զարուն միքանի ձիգ ամիսներ, հողը, մընալով պառկած, կոտացած վիճակում, իր վրա առաջացած բազմաթիվ մազային անոթներով հողի մեջ ցանքից հետո մնացած քիչ քանակությամբ ջուրն ել և գոլորշիանում փոխանակ կանոնավոր կերպով աշնան, ձմռան և զարնան առան տեղումների ջրերն իր մեջ կուտակելու։ Բացի դրանից, բերքահագարքից հետո, գարնանային միամյա, ինչպես և այլ տեսակի (յերկամյա, կոճղարմատավոր և այլն) մոլախոտերն առատ լույս ստանալով՝ զարգանալ են սկսում չափազանց արագությամբ և հարստահարում հողը, թե ջրից և թե սննդանյութերից։ Դա յել դեռ բավական չե։ Աշնան, ձմռան և զարնան տեղումների ջրերը, թե աշնան և թե գարնան ամիսներին, իրենց հարվածներով ու ծանրությամբ, ավելի յեն քարաշնում չվարված հողամասը և քայրայում բերքասավության բարձրացման համար

իուշոր նշանակություն ունեցող՝ կնձիկային սարուկ-
տառան։ Ապատ ջրերն աղասորքն հոսելով մեր
լեռնային և նախալեռնային շրջանների զափիվայր հո-
ղամասների միջով, արորում ու տանում են հաճախ հո-
ղի մակերեսի բուսական մնացորդները և այլ պիտանի
մասերը։

Իսկ մեր բամբակագործական շրջաններում հողա-
մասների հարթության պատճառով թեև աշնան և գար-
նան ջրերը չեն վազողում հողամասները, բայց և այն-
պես չեն ել կուտակվում հողի մեջ։ Այսիդ ևս նույն
գործոնների ազդեցության տակ աշնանից չփարված
հողերը նստում, պնդանում են, վորի հետեվանքով
գրեթե կանգ են առնում հողի մեջ կատարվող տարրեր
տեսակի պրոցեսները, վորով պայմանավորված ե հո-
ղի կյանքն ու նրա պտղաբերությունը։ Դրանից սոս-
կալի քայլքայլում է հողի ֆիզիքական գրությունն և
վատանում նրա, թե ջրային և թե ողային պայման-
ները։ Թե աշնան, թե ձմռան և թե զարնան տեղում-
ների ջրերի շատ քիչ մասն և մտնում հողի մեջ, իսկ
հողում կուտակված այդ քիչ քանակությամբ ջրերն ել
դարնանը, ջերմության և քամիների ազդեցության
տակ՝ գոլորշիմանում են արագորեն։

Բոլորովին հակառակ պատկեր ունի այս տեսակե-
տից աշնանահերկը։ Աշնանահերկն ամենահուսալի մի-
ջոցն է խոնավության կլաման, կուտակման և պահ-
պանման համար։ Յերբ մենք զարնանացանի հողամա-
սը վարում ենք աշնանից և առանց փոցիներու թողնում
ձմեռելու, դրանով իսկ, մեծագույն չափով նրա մեջ
աշնան, ձմռան և զարնան ջրերի կուտակվելու հնարա-
վորություն ենք ստեղծում։ Բացի ջուր կուտակելուց,
աշնանահերկի չնորհիվ լավանում է հողի կազմու-

թյունն և հետեւվապես նրա ֆիզիքական հատկություն-
ները, կուտակվում մննդանյութեր, նա յէ, վոր հաջող
կերպով վոչնչացման և յենթարկում մոլախոտերին և
վնասատուներին։ Աշնանահերկի այդ հոկայտական նը-
շանակություն ունեցող աղբոնոմիական առավելու-
շանակություն մասին խոսք կլինի հետո, դրանց նվիրված
թյունների մասին խոսք կլինի հետո։

Վոր աշնանահերկն ահազին չափերով ջուր ե կու-
տակում իր մեջ՝ դա անկանկածելի յէ և ցույց կտանք
այն նաև թվերով, բայց մինչ դրանց դիմելը, միքանի
պասպահեցած և ասել խոզանահերկի մասին։ Վոր-
խոսք անհրաժեշտ է ասել խոզանահերկի մասին։ Վոր-
խոսքի հոգում շատ զար կուտակվի, պետք ե թե՛ մեր
տեխնիկական և թե՛ մյաւս կուլտուրական բույսերից
տեխնիկական և թե՛ մյաւս կուլտուրական բույսերից
վարել թերքահավաքի հետ միասին, լրիվ խորությամբ, իսկ հացահատիկներից և
այլ բույսերից վաղ աղատովող (Հունիս, Հուլիս և ո-
պաստու տմիններին) հողերը, բերքահավաքի հետ միա-
սին անհրաժեշտ է խոզանահերկել 5-10 սանտիմետր
(1-2 վերջոկ) խորությամբ, 4 խոփանի գութաններով,
յեթե քաշող ուժերը ձիեր են կամ յեղներ, իսկ տրակ-
տորով աշխատելու դեպքում՝ բազմախովանի «Առշաշել-
նիկներով», յեթե վոչնչանում ե հողի յերեսի կեղեկը,
բարակ և փափուկ հողի շերտի չնորհիվ ընդհատվում ե
մազային անոթների հաղորդակցությունն ատմասֆե-
րայի հետ, վորով և կանխովում և գոլորշիցումը և
ըայի հետ, վորով և կանխովում և գոլորշիցումը և
հողի ցածր շերտը պահպան խոնավ վիճակում։ Խոզ-
անահերկը շատ արծեխալոր ազրութենարկում է մասնա-
վարակի շատ չափավոր մեր չորային շրջաններում։ Շատերը թերա-
վահատում են այս գործը նրա վրա նայելով ինչ վոր
վահահատում գործադրվող աշխատանքի։ Դա գործին վոչ
աննպատակ գործադրվող պիտակցությամբ վերաբերվելու հետեւվակին

Է : Ակադեմիկ Վիլյամսի հաշվով խոզանակերպած հոգամասը խոնավ պահելով հողի ցածի շերտը 5-7 անգամ քերեվացնում է այդ հողի աշխատահերթի աշխատահիները :

Հետապայում ելի կանդրագառնանք վաղ ապաւող հողամասերի խոզանահերկի՝ իրբեզ մոլախոտերի և վնասատուների գեմ կովելու հողն որդանական նյութերով հարստացնելու աշխանահերկի նշանակությունն ավելի ևս բարձրացնող լավագույն մի միջոցի մասին։ Բայց ինչպես մյուս բույսերից աղատվող հողամասերը, այնպես և խոզանահերկած հողերը, անպայմանուրեն աշխանը, խոզանահերկից մեկ և մեկ ու կես ամբահետո, անհրաժեշտ և լրիվ խորությամբ վարել։

Աշխանահերկը պետք է թունել առանց փողինելու, վորնրա ակուները պահեն ձմռան ձյունը քամբներից և վաղ գարնան թե՛ անձրեսիի և թե՛ հալչող ձյան ջրերը հեշտությունը կուտակվեն հողի մեջ։

Գարնանը պետք է շատ զգույշ լինել. հենց վոր հողի յերեսն սկսեց չորանալ ու նրա մեջ խրվելու վըստանդն անհետանալ, փոցինել հողամասը, վարից հողի մակերեսը փոքրանում է, գոլորշացումն ել դանդաղում։ Բացի այդ, փոցին իր հետ քաշում և դուրս և բերում զանազան տեսակի մոլախոտերը։ Այստեղ մի փոքր ուշացում՝ հալասարազոր և ջրի ահազին քանակության կորսախն։ Բացի դրանից, յեթե հողը չորացավ, նախ՝ փոցին այլևս չի կարող կատարել իր դերը կանոնակիր, յերկրորդ՝ նա փոխանակ կոճղաբժատավոր մոլախոտերին գուրս բերելու՝ կկտրատի և դրանով իսկ նրանց գեմ պայքարելու փոխարեն, նըրանց բազմացմանը կնպաստի։

Ահա այս ձեռվ վարված և նախապատրաստված հողն

իր մեջ կուտակած առատ խոնավությամբ տրամադրվում է գարնանացաներին, վորի չորրէիլ թե սերմերն են շուտ ծլում և թե բույսերն իրենց զարգացման հետազա շրջաններում, ապահովում են ջրի կողմից։

ԽՍՀՄ հարավ արեվիկյան մասի փորձակայանները չափազանց շատ են հետաքրքրվել ու կատարել հետազոտություններ՝ հողում մթնոլորտային տեղումների ջրերը կուտակելու հարցի վերաբերմամբ, ուստի նրանցից բերենք միքանի թվեր։

Սարատովի չացահատիկային Տնտեսության ինստիտուտը, մեկ հեկտար հողամասի մեկ մետր խորության շերտում աշխանը և գարնանը, աշնանից վարված և չվարված հողերում գտել ե այսքան ցենտներ ջուր

	Աշխան հետազոտության ժամանակ յեղել ե	14.900
1. Աշխանահերկում	Գարնան հետազոտության ժամանակ յեղել ե	24.100
	Աշխանից մինչև գարուն ավելացել ե	9.200
	Աշխան հետազոտության ժամանակ յեղել ե	19.090
2. Զգարված հողում	Գարնան հետազոտության ժամանակ յեղել ե	23.050
	Աշխանից գարուն ավելացել ե	7.960

Աշխանահերկը մինչեւ գարուն կուտակել ե 1240 ցենտներով ավելի շատ ջուր, աշխանից չվարված հողամասի համեմատությամբ։ Եեվ յեթե սրա հետ նաև նկատի ունենանք, վոր մինչեւ հողամասի գարնան վարելը, ինչպես և վարելուց հետո, այս հողամասի խոնավության զգալի մասն ել գոլորշիանալու յե, ապա պարզ կլինի աշխանահերկի խոչըր առավելությունը խոնավությունը կուտակելու և այն պահելու տեսակետից։

իսկ յեթե մինչև աշնանահերկը, հողի յերեսը սեվացրած ե լինում, աշնանահերկն ավելի շատ ջուր ե կուտակում ու պահում. մոտավորապես 5-6 հազար ցենտներ:

Զպեաք ե մոռանալ, վոր յեթե հողը վորոշ նորմայից դենը կորցրեց իր խոնավությունը, նրա Փիզիքական հատկությունները գրանցված են ամենաարագ կերպով գեպի վատր: Չորսացած հողի մասնիկներն իրենց մակերեսի վրա այնպիսի մեծ ուժով ահագին քանակությամբ ող են կուտակում, վոր ջրելու կամ հողը խոնավացնելու գործը խիստ դժվարանում ե, ինչպես գժվար ե լինում փոշու մեկ յերկու ոռնտիմեար հաստության շերտի թրջելը: Դա նրանից ե, վոր հողի մասնիկների վրա կուտակված ողը չի թողնում, վոր ջուրը ծծվի մասնիկների մեջ:

Մենակ մեզ մոտ չե, վոր տարեկան տեղումները քիչ են: Ամերիկայի, չոր յերկագործության հարցերին բավականաշափ ծանոթ Զօհն Ռեֆունը, մանրամասն թվերով ցույց ե տալիս, վոր յերկագործի մակերեսի 55 տոկոսն սատանում ե տարեկան 500 մելիմետրից պակաս մթնոլորտային տեղումներ, վորից 25 տոկոսը՝ 250 միլիմետրից ել ցածր տեղումներ, այսինքն Սարդարաբաղից ել քիչ:

Ժամանակակից գյուղատնտեսական գիտությունների նվաճումների գործադրումն ե' Ամերիկայում և' մեր Միության հարավ արեվելյան խիստ յերաշտուշրջաններում, հնարավորություն ե տվել զարգացնելու, առանց վոռոգող ջրի կաթիլն անզամ ողտագործելու հացահատիկներ, խոտաբույսեր, յեզիկացրուեն, շաքարի ձակնղեղ, կարտոֆիլ և այլ բույսեր ու առատ ել բերք ստանալ նրանցից: Յեզ այդ պատմական վիթ-

խարի նվաճումների մեջ, աշնանահերկն անփոխարինելի մասնակցություն ե ունեցել: Աշնանահերկերի աւարածմամբ, անպայմանորեն մեծ փոփոխությունների յիշնթարկվելու հերկայումս գեռես բավական չափով տարածված ցելային սիստեմը: Յելերի տարածության կրծատումն հոգուտ աշնանահերկերի՝ անխուսափելի յե և անհրաժեշտ: Աշնանահերկը հոգում կուտակելով բավականաշափ խոնավություն, հնարավորություն ե տալիս հոգն ոգտագործել ամեն տարի:

Այսպիսով աշնանահերկը, յերաշտի դեմ պայքարելու գործում, ամենավատահելի միջոցներից մեկն ե:

Բ. ԱՇԽԱՆԱՀԵՐԿԸ ԼԱՎԱՑՆՈՒՄ Ե ՀՈՂԻ
ԹԻԶԻԳԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԿՈՒՏԱԿՈՒՄ Ե
ՍՆՆԴԱՆՅՅՈՒԹԵՐԸ

Հողի մշակության բոլոր ձևերով նպատակ ենք դնում, հասունացնել հողը և նրան պահել վորքան հնարավոր է հասուն վիճակում: Վորովհետեւ հողի հասունությունից ե կախված մեր կուլտուրական բույսերի բերքատվության բարձրությունը: Հասունացած հողը փոխում ե իր գույնը, հոտը, նաև համեմատաբար մուգ գույն ե ստանում: Փոփոխում են նաև նրա Փիզիքական հատկությունները. հողը փափկում է, մեծանում ե նրա ծավալը, ժամանակի ընթացքում փիրանում և կնձիկային սորուկտուրա կազմում: Այսպիսի հատկություններ ե ձեռք բերում նաև աշնանահերկը՝ աշնանից մինչեւ գարուն ընկած ժամանակամիջոցում՝ արեվի, սառուցիցի և մանավանդ հողի մեջ կատարվող զանազան տեսակի պրոցեսների հետեւացնքով: Յերբ մենք անցնում ենք հասունացած հողի մոտով, տես-

նում ենք, և նրա միջով քայլելիս՝ զգում, թե հողի վոռ
փոխված գույնը և թե նրա փխրունությունը։ Սրանք
արտաքին նշաններն են, բայց այսպիսի արտաքին նշան-
ներ, վորոնք արտահայտում են հողի ներքին վիճակը,
նրա մեջ տեղի ունեցող ֆիզիքական, քիմիական և
բիոլոգիական պրոցեսները, առանց վորոնց անկարելի
յի սպասել հողի հասունացմանը։ Իսկ վորպիսպի հո-
ղում տեղի ունենան այս բարդ, միմյանց հետ շաղ-
կապված պրոցեսները, անհրաժեշտ են ող, զուր և
ջերմություն։ Բացի դրանից՝ պահանջվում է նաև ժա-
մանակ, վորպեսպի այս պրոցեսների հետեւանքով
հողը հասունանա։ Այս բոլոր պայմաններն ստեղծվում
են աշխանահերկի կատարմամբ։

Վարի ժամանակ, բերքահավաքից հետո մնացաւ
բոլոր բուսական մնացորդները, ինչպես և մոլախոտերը
գութանի կտրած հողի շերտի շրջվելու ընորհիվ, ընկ
նում են ակոսի մեջ և ծածկվում հողի շերտով։ Հողը
փափկում է, վերածվում մեծ ու փոքր մասնիկների,
նրա ծակոտիկենությունը մեծանում և հեշտությամբ
ողի փախանակություն և սկսվում հողի և ատմասֆե-
րայի միջեվ։ Հողում կուտակվում են խոնավություն։
Սկսվում են բակտերիաների ակտիվ գործունեության
շանը։ Նրանք քայլայում են հողի մեջ ընկած բուսա-
կան մնացորդներն և կտրտված ու հողի մեջ շուր տըր-
ված մոլախոտերը։ Բակտերիաների մի խումբն ողի
ներկայությամբ քայլայում ե այդ որգանական մնա-
ցորդները մինչեվ վերջ՝ առաջացնելով ջուր, ածխա-
թթու, զաղ և զանազան տեսակի աղեր, վորոնք հետա-
գյում լուծվելով ջրում՝ դառնում են մեր կուտու-
րական բույների սնունդը։ Ինչքան բարենպատ լինի
ջրի և ողի քանակը հողի մեջ և որերն ել տաք, այնքան

ել յեռանգում կաշխատեն այս խմբի բակտերիաները
և այնքան ել շատ սնունդ կպատրաստվի մեր կուլտու-
րական բույների համար։

Իսկ մյուս խումբ բակտերիաները, վորոնք ապրում
են հողի ցածի շերտերում առանց ողի, այլ ճանապար-
հուկ են քայլայում վարելի շերտի հիմքում, անմիջա-
պես ակոսի հատակում լնկած բուսական մնացորդնե-
րը, ինչպես և մոլախոտերը։ Բայց սրանք մինչև վեր-
ջը չեն քայլայում որգանական նյութերը, այլ թողնում
են կես ճանապարհին։ Այդ ճանապարհի կեսին մնացած,
այսինքն մինչև վերջը չքայլայված որգանական նյու-
թերին անվանում են հումուս, վորը հողի սարուկտու-
րան կնծիկային դարձնելու պրոցեսում, չտեսնված գեր-
և խաղում։ Շատ հումուս է կազմակերպվում հողի վար-
փած շերտի ցածի մասում, ուր և գութանի վարի ժա-
մանակ թափվում է հողի մակերեսի 5–10 սանտ։ փո-
շացած շերտը։ Այդ մակերեսի շերտը ժամանակի ըն-
թացքում փոշիանում և զանազան պատճառներից-անձ-
րելիների հարվածներից, ջրելուց, ինչպես և անժամա-
նակ և անշնորք հողի մշակությունից և այլն։ Փոշիա-
ցած հողը վուր և անցկացնում իր միջով և վուր ել
ող։ Խիստ կեղեվակալումը, որ մեր բամբակագործա-
կան շրջաններում, հետեւանք և հողի մակերեսի շերտի
փոշիացած գրության։ Հետեւական շատ անհրաժեշտ ե
լավացել այդպես փոշիացած հողի ֆիզիքական կազմու-
թյունը-Փիզիքական հատկությունները։ Հումուսը շա-
ղախում, միմյանց է կպցնում այդ փոշիացած մասնիկ-
ները և առաջացնում կնճնիկային սարուկտուրայի հող,
վորն արդեն հաջորդ վարի ժամանակ գարով հողի յե-
րեսը՝ իր մեջ շատ ող կարող կլինի անցկացնել և մեծ
քանակությամբ ել ջուր կլանել։

Այսպես ուրիմն բակտերիաների գործություրյան հետեւվանքով, թէ աշնան և թէ գարնան ամիսներում (ձմռան կանգ և տոնում նրանց գործություրյունը ցըրտերի պատճառով) լավանում է հոդի ստրոկտուրան և հոդում կուտակվում է մեր բույսերի համար անհրաժեշտ զանազան տեսակի սննդանյութեր: Այդ սննդանյութերի մեջ շատ է լինում մելիտրան: Մելիտրան ագրտական սննդն է, իսկ առանց ազուրի աշխարհի յերեսին փորկե կյանք գոյուրյուն ունենալ չի կարող:

Սարատովի փորձակայանի մեկ հեկտար 1 մետրական շերտում տարրեր ժամանակ վարված հողերում հետեւվյալ քանակությամբ սելիտրա յի կազմվել՝

Աշնանահերկում	5,55 ցենտներ:
Թարնանը վարված հողում	0,50 ցենտներ:

Այսպիսով տեսնում ենք, վոր յեթե ժամանակին եկատարված աշնանահերկը, ապա նրա մեջ 10 և կես անգամ՝ շատ սելիտր եկազմվում գարնան վարի համեմատությամբ:

Զուրը և ողը (վորոնց քանակն ավելի յի շատանում աշնանահերկում հողի ստրուկտուրայի լավացման հետեւվանքով) նմանապես տաքությունը և ցուրտն ուժեղ աղեցություն են գործում աշնանահերկի վրա՝ աշնան ձմռան և գարնան ամիսներին: Աշնանահերկը հողմնաշարվում է, նրա միջի ջրով հաղեցած կոշտերը ձմռան ցրտերին սառչում են և ջարդ ու փշուր են լինում, չոնորհիվ այն առանձնահատկության, վոր ջուրը սառչելիս ծավալը մեծանում է, մոտավորապես 100 ծավալ հողում մեծ քանակությամբ սննդանյութեր կուտա-

Հողմնահարման հետեւվանքով ևս ջրում անլուծելի շատ միացությունները, քայլքայլում և փոփոխ-

վում են, դառնում են լուծելի և հետագայում գործադրվում իրեւ բույսերի սնունդ:

Զվարված հողամասը մեռած գիակի յի նման, նրա մեջ ոդի մուտքն ու յելքը տեղի յի ունենում անհշան քանակությամբ և խիստ զանգաղությամբ: Նա չի թողնում, վոր ջուրը ծծվի և թափանցի ղեպի հողի ներքին շերտը: Բացի զրանից, բերքահավաքից հետո մացած թանկապին բուսական մնացորդները կարմ ժամանակից հետո խանձվում են ամառվա վերջերի և աշնան սկզբի որերի արևի կիզիչ ճառագայթների տակ կամ թե քամիներից դեռ ու դեն քշվում, փոխանակ հողի մեջ մտցվերու, հողի ստրուկտուրան լավացնելու և հողում մեծ քանակությամբ սննդանյութեր կուտակելու:

Ահա այդ անցանկալի յերեվույթները կանխելու համար, ե, վոր հացահատիկների, ինչպես և վաղ հողն ազատող բույսերի հենց բերքահավաքի հետ՝ հողի յերեսը 5-10 սանտ. խորությամբ վարում են չորս խոփանի գութանով, կամ բաղմախոփի «լուչէինիկներով»՝ յեթե տրակտորն ե աշխատում: Այս գեպքում բուսական բոլոր մնացորդներն ինչպես և թղուկ մնացած բաղմաթիվ քանակության համար մոլախոտերը չըջվում են, ծածկվում հողի բարակ շերտով և քայլքայլում: Բացի զրանից, այդ փուխը 5-10 սանտիմ. շերտը խոնալ և պահում հողը: Դրանից մեկ և կես ամիս հետո կատարում ե լրիվ խորության վարը և չուռ տալիս խոզանահերկից հետո ծածկ բոլոր մոլախոտերը հողի հասու շերտի տակ, ուր նրանք սկսում են քայլքայլել այն ձեզով, ինչ ամվեց քիչ առաջ: Ուշ ազատվող (սեպտեմբերից հետո) հողերը չպետք ե խոզանահերկել, այլ անմիջապես աշնանահերկ անել բերքահավաքից հետո:

Գարնան վարը զուրկի և այս բոլոր առավելություններից : Հաճախ դարնանային անձրելիներն ավելի յեն ուշացնում գարնան վարը և վատացնում նրա վորակը : Գարնան վարից մինչեւ գարնանացանի սկսվելն այնքան կարծ ժամանակ է (2-3 շաբաթ, հաճախ ավելի պակաս՝ 3-4 որ), վոր խոսք չի կարող լինել այդպիսի հողի հասունացման մասին : Մենք տեսանք, թե ինչքան քիչ սելիտրա յև կաղմկում գարնանից վարած հողում և գեռ տեսնելու յենք, թե այդ և թե մյուս բացասական կողմերի հետեանքով, վորպիսին ունի գարնան վարը, ինչքան և առժում գարնանացանը բերքի տեսակետից :

Գ. ԱՇԽԱՆԱՀԵՐԻԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑՆ Ե
ՄՈԼԱԽՈՏԵՐԻՆ ՅԵՎ ՎՆԱՍՍՏՈՒՆԵՐԻՆ ՄԱՍՍԱՅԱ-
ԿԱՆ ՎՈՉՆՉԱՅՄԱՆ ՅԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

Մոլախոտերի և վնասատուների մեջ հասցրած վնասը խոչըր և, նա հոկայական չափերի յի հասում : Տարեկան մենակ մոլախոտերի պատճառով մեկ տիլիարդ փութ հացահատիկի կորուստ ենք ունենում և գրանից ել վոչ պահաս զանազան վնասատուներից : Մենակ Ուկրայնիայում 25 թվին մոլախոտերի պատճառով 235-275 միլիոն փութ աշնանացան և գարնանացան հացահատիկ կորավ : Պալտավայրի ըրջակայքի վեց ըրջանների 26 թվի հետազոտությունը պարզեց, վոր գարնանացանքերը 20-25 %-ով պակաս բերը են տալիս՝ գաչտերի մոլախոտերով վարակված լինելու հետեանքով : Յեթե այս բոլորին ավելացնենք, թե զանազան վնասատուներից և մոլախոտերից, ինչ չափով բամբակի, շաքարի, ձակնողեղի, խոտարույների և այլն կուտուրաների բերքի կորուստ ենք ստա-

նում, առաջատար միանդամայն պարզ կլինի:

Խորհրդային Հայաստանի բոլոր շրջանների հողերը շատ խիստ վարակված են մոլախոտերով : Մեր բոլոր շրջաններում վիստում են մեծ քանակությամբ բազ-մաթիվ տեսակի վնասատուներ :

Մեր նախալեռնային և լեռնային շրջանների դաշտերը հաճախ այնքան վարակված են լինում մոլախոտերով, վոր գեղար և լինում վորոշել, թե ի՞նչ բույսի համար և հատկացված հողամասը—հացահատիկի, թե՝ մոլախոտերի : Այդպես են Սեանը, Բայրազետը, Լենինականը և այլն : Մեր բամբակի դաշտերը, յեթե մանավանդ ժամանակելին միջ շարքային մշակությունը չի տարվում, հաճախ համատարած կերպով ծածկվում են մոլախոտային բուսականությամբ, առվերի տակ թողնելով բամբակենուն : Մոլախոտերի սերմերը հավաքվում են բաղմաթիվ ձանապարհներով քամու, ջրի, թրոչունների, մեր ընտանի կենդանիների և վերջապես իրեն մարդու միջոցով ևս (յերբ նա ցանում է սերմն առանց զտելու) :

Մոլախոտերն աննպաստ կլիմայական և այլ պայմաններին ավելի դիմացկուն են, քան մեր կուլտուրական բույսերը :

Անհամար քանակությամբ մեր զաշտերում տարածված մոլախոտերը կանքի և մահու պայքար են տանում մեր կուլտուրական բույսերի հետ, բոլոր Փրոնտներում, ամեն ինչին և տեղին, և լույսին, և ողին, և ջրին, և օննդին, և չերմությանը—տիրելու համար : Բայց դրանից, մոլախոտերը վնասատուների ամենահայտնի տարածողներն են : Վնասատուների զգալի մասը զանազան ձևերով ապրում, բազմանում և ձմե-

ուռամ և վոչ միայն հողի շերտերում, այլև հողի մակերեսի բուսական մնացորդների և մոլախոտերի վրա: Տարվա նպաստավոր յեղանակներին սրանց վրա ապրող վնասատուները բազմանում են, վորոշ ժամանակ սնվում մոլախոտերի տերևներով ու ապա անցնում մեր կուտուրական բույսերի վրա: Ամեն տարվա փորձերից հայտնի յէ, թե միջնակներում և դաշտում տարածված մոլախոտերն ինչպիսի չափերով են վարակում մեր բամբակենիները՝ լինենալ, չոռով և այլն վնասատուներով ու զբանով իսկ ավելի ու ավելի թուլացնում առանց այդ եւ իրենց-մոլախոտերի կողմից խիստ թուլացած կուլտուրական բույսերին: Այդ տեսակետից պայքարը մոլախոտերի դեմ միաժամանակ պայքար և մեր կուլտուրական բույսերի վնասատուների զգալի մասի դեմ:

Մոլախոտերի դեմ պետք և կովել բոլոր միջոցներով—դառն սերմերը, տարածել շարքահերկ բույսերի, հացատիկային և անամնապահական ըրջաններում, կազմակերպել կանոնավոր ցանքահաշընառություն՝ շարքահերկ բույսերի և խոտաբույների գերակշռությամբ և հացատիկները ցանել շարքահերկ բույսերից չետո: Խոչըր նշանակություն ունի միջնակների մոլախոտերի վոչնչացումը: Այլ տեսակետից սովորով և կորիսող շինարարությունն, ինչպես և ՄՏԿ-ների գործունեյությունն անդնահատելի ազգոնոմիական գործ կատարեցին և կատարում են, վոչ միայն միջնակի մոլախոտերը, այլ չենց իրեն-միջնակին՝ վոչնչացնելով:

Հողի մեջ մելիսարդների հասնող մոլախոտերի սերմեր կան: Բավական և այդ տեսակետից մի քանի թվեր բերել: Սամարայի նահանգի մեկ հեկտարի վարե-

լի շերտում (4 վերշոկ) գտել են 160 միլիոն մոլախոտի սերմ, իսկ նախկին Յեկատերինուսալավի նահանգի գաշտերի մեկ հեկտարի հողի վարելաշերտում գտել են մինչև 997 միլիոն մոլախոտի սերմ: Վորովեսզի այդ թվինը յերեան դան իրենց ահուելիությամբ՝ պետք ե խմանալ, վոր ցորենի ցանքսի զեղքում, յերբ մեկ հեկտարին ցանում ենք 80-90 կիլո սերմ, ընդամենը 3-4 միլիոն ցորենի հատիկ և ցանվում: Հողի վարելի շերտում մի զեղքում 40, իսկ մյուս զեղքում 245 անդամ ավելի շատ մոլախոտի սերմեր կան, քան ցորենի հատիկների այն քանակությունը, վոր մենք սովորաբար ցանում ենք մեկ հեկտարում: Պարզ ե ուրիմն, վոր անլրնա կրտսրածը միայն կարող ե մոլախոտերի հաշվիլ տեսնել:

Այս տեսակետից աշնանահերկը լավագույն միջոցն է: Բամբակից և մյուս կրտսրաներից ազատվող հողերը աշնանահերկելով՝ կորատում և հողի շերտի տակալին են արված քերտահավաքից հետո հողի յերեսին մնացած մոլախոտերը և բուսական մնացորդները: Աշնանահերկից հետո ծած մոլախոտը, ինչպես և աշնանահերկի ժամանակ հողի յերեսը շարտված արմատներով և կոնդարմատներով բազմացող բույսերը յենթարկելով ցրտահարման, վոչնչանում են: Աշնանահերկը և՛ մոլախոտերին, և՛ վնասատուներին մասայականորեն վահանակ փորձված և ստուգված ամենահատու գենֆերից մեկն ե:

Այն մոլախոտերի դեմ, վորոնք բազմանում են սերմերով կամ պտուղներով, պայքարը պետք ե տանել ցանքս կատարելուց շատ առաջ, հետելյալ ձեւով.

ա) Ստեղծել բոլոր նպաստավոր պայմանները, վոր

հողի մեջ գտնվող սերմերը ծլեն: Յեկ ինչքան շուտ ծլեն, այնին լավ:

բ) Սպա նրանց վոչնչացնել մասսայական կերպով միևնու ծաղկելը և սերմ տալը:

Հիանալի դեր և կատարում այդ տեսակետից աշնանահերկը: Այդ դերն ել ամելի մեծ և լինում, յերբ աշնանահերկին նախորդում ե խողանահերկը: 5-10 սանտիմ. խորությամբ հողի յերեսը սեացնելով վոչնչացնում ենք դեսնին պառկած մոլախոտերին և զրջում հողի շերտի տակ մյուս բուսական մնացորդների հետ միասին, ուր նրանք բակտերիաների ազդեցության տակ քայլայիլում են, լավացնում հողը և կուտակում սննդանյութեր: Հողի չնորոշ շրջելուց, բացի մոլախոտերի կանաչ մասսայից և բուսական մնացորդներից, հողի տակն ենք տալիս հողի յերեսին թափված միլիոնափոք մոլախոտի սերմեր, այդ շերտում բակական խոնավություն և համում հողի ցածի շերտերից, կա նաև առատ ոդ սերմերի չնչառության համար, իսկ բերքահավաքից հետո որենքն ել բակական տաք են լինում: Ոդ, ջուր, ջերմություն-աշա այն յերեք պայմանները, վոր բոլոր տեսակի սերմերը (դրանց թվում և մոլախոտների սերմերը) պահանջում են իրենց ծնելու համար: Կարձ ժամանակից հետո (3-4 շաբաթ) մեծ քանակությամբ մլախոտերի սերմեր են ծլում, և կանաչացնում դաշտը: Մի ամիս, ամիսու կես հետո, ել ժամանակը չպետք ե բաց թողնել. պետք ե լրիվ խորությամբ կատարել աշնանահերկը: Այս գեղագում արդեն բավական հաստության հողի շերտի տակն ընկնելով, մոլախոտերը դանդաղածային կոտորածի յեն յենթարկվում և քայլայիլում բակտերիաների կողմից, վորից լավանում

և հողի կաղմությունը, բացի դրանից հողն ել՝ հարստանում և սննդանյութերով: Աշնանահերկից հետո ևս կարող են ծլիլ ահաղին քանակությամբ մոլախոտերի սերմեր, յեթե որերը տաք են, բայց դրանցից չպետք ե վախենալ, նրանք չուտով վրա հասնող ձմեռվա ցրտերից վոչնչանալու յեն՝ ծաղիկ և սերմ տալուց շատ առաջ: Այսպիսով խողանահերկով վոչնչացնում ենք դարնանային մոլախոտերը, վորոնք կարող ելին բերքահավաքից հետո սերմեր տալ, վոչնչացնում ենք նաև յերկամյա մոլախոտերը: Իսկ խողանահերկից հետո ծլած մոլախոտերը վոչնչացնում աշնանահերկով: Խողանահերկի կատարմամբ մոլախոտերի քանակությունը կրծատվում և միքանի անդամ: Ռաստովի փորձակայանում 4 խոփանի գութանով խողանահերկած հողամասում, ուր ցանված եր գարնանացան ցորեն՝ յերեք անգամ պարկաս ելին մոլախոտերը չխողանահերկած զաշտից: Բայց մեկ ել ենք կրկնում՝ աշնանահերկն ե, վոր խողանահերկից հետո ծլած մոլախոտերին վոչնչացնում և անխնայորեն: Բացի դրանից, աշնանահերկն են նաև, վոր ցուրս և հանում հողի յերեսը և ձմեռվա սառնամանիքներին յենթարկում ու վոչնչացնում արմատներով բազմացող մոլախոտերին, ինչպես և կոճղարմատափոր մատղաշ մոլախոտերին:

Յեկ այն, ինչ վոր ասում ենք, հաստատված և փորձակայանների կատարած մանրազնին փորձերով: Այսպես որինակ՝ գարնանացան ցորենի դաշտի 45 մետր մակերեսի վրա հաշվել են հետեւյալ քանակությամբ ցորենի ցողուններ և մոլախոտեր տարբեր ժամանակից վարված հողամասում՝

Գարնանացանից գորենի թիվը	Մոլախոտերի թիվը
Աշնանից վարած	15.382
Գարնանից վարած	12.709

Տարբերությունը հակասական է։ Աշնանահերկի դեպքում մի քառորդով ավելանում է ցորենի ցողունների թիվը և մոտավորապես չորս անգամով ել պահանջման մոլախոտերի քանակը, զարդան վարի համեմատությունը։ Յերեւ աշնանից ե վարված հողմասը, ցորենի ամեն մի յերկուս ու կես ցողունի դիմաց կանգնած է մեկ մոլախոտի բռյա, իսկ գարնան վարի դեպքում՝ ուժերը դասավորված են բոլորովին հակառակ կերպով—2 մոլախոտի դիմաց կանգնած է մի խրդեուկ ցորենի ցողուն։ Իսկ սրանից ինչ ե հետեւում, այն, զոր գարնանավարի գեալքում շատ չնչին քանակությամբ բերք պետք է սպասել։ Այսպես որինակ, Պալտավայի փորձադաշտը հաստատել է, զոր աշնանահերկ չկատարելու պատճառով գյուղացիական հողերից ստացվում եր 16 ցենտների փոխարեն՝ ընդհամենը 10 ցենտներ ցորենի բերք։ Բերքի մի յերրորդից ամելին գործադրվում եր մոլախոտերի բազմացման և տարածման «կարիքը» բավարարելու համար։ Յեկայդնորդի այն բանի, զոր մանր անհատական գյուղացին իր հողամասը չի մշակում այնպես, ինչպես պահանջում եր դյուզամետեսական գիտությունը։

ԱՇԽԱՆՆԵՐԿԸ ՊԱՅՔԱՐ Ե ՎԵԱՍՍՈՒՆԵՐԻ ԴԵՄ—Յեր կուլտուրական բույսերի վնասատումները

յերկու բնակավայր ունեն, մեկը հողն է, իսկ մյուսը հողի մակերեսին դանվող բուսական մնացորդները և հատկապես զանազան տեսակի մոլախոտերը։ Խոզանահերկի գելքում, հողի վերևի շերտերում (մինչեւ 10 սահմանիմետր) գտնվող վնասատումների թրթուներն ընկնելով արել տակ, արելից, քամիներից վոչնչանում են և թռչուններին սնունդ գտնուում։

Իսկ աշնանահերկի ժամանակ ավելի խոր շերտերում ապաստան գտած բբռուներն ել շուրջ գառը հողի յերեսը կատորվում են և՛ քռչուներից, և՛ բամիներից և՛ վերջապես ձմեռվա սանամանիմենրից։

Իսկ ինչ վերաբերում է մոլախոտերի և բուսական մնացորդների մեջ վնասվող վնասատումների, ապա այստեղ արգեն 18-20 սանտիմետր խորությունը աշնանահերկի մոլախոտերի և բուսական մնացորդների հետ միասին նրանց ևս հողի հաստ շերտի տակովն է անում և խեղդում։ Աշնանահերկը շատ չի կարելի ուշացնել, վորովինուն դրանից քե՛ մոլախոտերի մի մասը կարող է սերմեր տալ և քայիլ հողում և քե փորչ վնասատուների հարսնյակներից կարող են բբռուներ դրւու գալ և բոչել։

Այսուեղ ևս կրկին անգամ տեսնում ենք, թե ինչ սքանչելի դեր է կատարում աշնանահերկը։ Մասնավորապես բացառիկ է դանուում աշնանահերկի դերը վնասատուների, ինչպես և մոլախոտերի վոչնչացման գործում, յերք «արար» ենի կատարում։ Մեծ քանակությունը հողի մեջ կլանված ջրի ձմեռվա ամեներին սառչելը, մահացու հարված և հասցնում և՛ վնասատուներին և՛ մոլախոտերին։ Յեթե այս ձեռվ մեր բամբակի վեասատուների հարսնյակները, պարուրված լինե-

լով պինդ տնակում, մնում ին անվտանդ, չեն չըստա-
հարգում, համենայն դեպք խուսափել աշնանահերկի
հետևանքով նրանց համար ստեղծված փակուլուց՝ նը-
րանց չի հաջողվի, վորովհետեւ 18-20 սանտիմետր խո-
րությամբ կատարված աշնանահերկը, դժանց մեծ մա-
սին հողի այնպիսի հաստ չերտի տակն եւ զցում, վոր
դարձանը հարսնյակներից դուրս յեկող թիթեռներին
վոչ մի կերպ չի հաջողվում կտրել այդ հաստ չերտը և
դուրս դալ յերկրի յերեսը՝ բամբակի դաշտերում նորից
ձվեր զնելու, թրթուռներ առաջացնելու և բամբակե-
նուն վնասելու: Աշնանահերկից այդպիս են տուժում
որինակ բամբակի, սովորայի, կարաղրինայի և այլ վր-
անաստուների հարսնյակներից դուրս յեկող թիթեռ-
ներին:

Զուր կուտակելուց քացի, այս նպատակով ել ա-
չա, այս աշնան մեր բամբակացան ըրջաններում
15.000 հեկտար «արար» պետք և կատարվի:

Մոլախոտերի և վնասատուների դեմ պետք և տար-
վի աելվական պայքար և այդ պայքարի բոլոր տեսակի
ադրոտեինսիկական միջոցների մեջ աշնանահերկը, իբրև
լավագույն նախագդուչական միջոցը—պետք և դառնա-
տիրապետող սիստեմը:

Զարեւք և կրածել, վոր 1-2 աշնանահերկով դաշտը
մաքրվելու յեւ մոլախոտերից: Պետք և նկատի ունենալ,
վոր քամիների, թռչունների, ջրի միջոցով, ինչպես և
այլ ձանապարհներով, վոչ միայն հարեան հողամասե-
րից, այլև շատ հեռուներից մոլախոտերի սերմեր են
թափում հողում: Բացի այդ, հողի մեջ գտնվող սեր-
մերը միանգամից չեն ծլում: Ամեն մի տեսակի մո-
լախոտերի սերմն իր ծլելու համար պահանջում և տարբեր

չափի չերմային և ջրային պայմաններ: Կան մոլախո-
տերի սերմներ, վորոնք այնպիսի հաստ կեղեվ ունեն,
վոր անհրաժեշտ եւ լինում բավականաչափ ջուր, վոր-
պեսպի սերմն ուռչի և ծիլը դուրս գա: Խոր շերտերում
ընկած մոլախոտերի սերմերը ջրից, ողից և ջերմու-
թյունից զուրկ լինելով՝ կարող են մեքանի տարի մնալ
հողի տակ, առանց կորցնելու իրենց ծրանակությունը:
Յեվ ինչքան մենակ հնդում շատ ող և ջուր մոցնենք և
հողի ֆիզիկական հատկություններն ել լավացնենք,
այնքան շատ նպաստավոր պայմանները կատեղծը մոլա-
խոտերի ծիլու համար և այնքան ել հեշտ կլինի նրանց
վոչնչացնելը: Խոկ այդ նպաստավոր պայմաններն ըս-
տեղծում են հենց աշնանահերկի կատարմամբ:

5. ԱՇՆԱՆԱՀԵՐԿԸ ԲԵՐՔՎԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁ- ՐԱՑՄԱՆ ՀԶՈՐ ՄԻՋՈՅՆ Ե

Այսպես ուրեմն, յեթե աշնանահերկում մեծ քա-
նակությամբ խոնավություն է կուտակվում, սկսվում է
ողի աղատ և առատ փոխանակություն հողի չերտի և
մթնոլորտի միջն ու ժամանակին հողի վարելի շերտի
տակը թաղվում հողի մակերեսի բուսական մնացորդ-
ները, ինչպես և մոլախոտերը, մեթե ջրի, ողի, արևի
և այլ բնական գործոնների ազդեցության տակ, կյանքի
յեն կոչվում հողմնահարժան և միկրոռդանիզմների
գործողությունները, վորոնց հետեանքով հողում բա-
վականաչափ սննդանյութեր են կուտակվում, խոկ մյուս
կողմից ել կիսաքայլայլած որգանական նյութերով
բարեւավվում հողի ֆիզիկական գրությունը, վորն իր
հերթին լավացնելով՝ հողի ջրային, ողային և ջերմային

պայմանները, ավելի բնուենսիվացնում և հողմնահաք-
ման և բիորդիկան պրոցեսները, յեթե վերջապես
հանձննա աշխանահերկի՝ ունենք սքանչելի միջոց մաս-
սայական վոչնչացման յենթարկելու ինասատսւներին և
ժուախոտերին, վորոնք խլում են մեր կուլտուրական
բույսերի սննդի, ջրի, ողի և լույսերի զգալի մասը,
ապա ի՞նչ և նշանակում այս բոլորը: Մի՞թե պարզ չեն,
վոր ժամանակին կատարված աշխանահերկի չնորհիվ
ստեղծված նովաստավոր այս բոլոր պայմանները, վո-
րոննք ապահովում են հսկայական չափերով բույսի նոր-
մալ կյանքն ու նրա փարթամ զարգացումը, անոր և վոր,
համապատասխան չափով ել բարձրացնելին մեր դար-
նանացան կուլտուրաների արտադրողականությունը:
Համոզվելու համար՝ ձայնը տանք փորձականերին:

ա) Արեվելյան Թուրքեստանի-Խորհրդային Միու-
թյան բամբակառործական այդ կենտրոնական շրջա-
նի-փորձագաղութերի տվյալների համաձայն՝ բամբակի
բերքը մեկ հեկտարից ավելանում է 4-7 տեսաներով
գարնան վարի համեմատությամբ, յեթե աշխանահերկ
և կատարված է:

բ) Շաղրինսկայի սովորով փորձնական հողամասի
ցերեք տարբա միջին տվյալների համաձայն, Վիկ-վար-
սակի խոտը հեկտարից՝ աշխանահերկի դեպքում՝ տվել
է 26,89 տեսաներ 132 տոկոս, գարնան վարի դեպքում՝
տվել է 20,44 տեսաներ 100 տոկոս: Աշխանահերկը Վիկ-
վարսակ խոտի բերքն ավելացնում է ½-ով:

գ) Գարնանացան ցորենի նկատմամբ Ռուսաստանի
մի շարք փորձակայանները տալիս են այսպիսի թվեր.
(1 հեկտարից, ցենտներով), իսկ գարնան ցորենը,

ԳՐԸՏԵՂԻ ՓՈՐՉԱԴԱՇՏԼ	Գարնան վա- րի դեպքում	Աշխան ներ- կի գեպօպում
Պալավայի կայանը (10 տարվա միջին թվեր)	8,9	13,0
Վորոնեժի կայանը (8 տարվա մի- ջին տվյալներ)	14,0	16,0

Խորհրդային Միության յերաշտոտ Նիժնի-Վոլգայի
շրջանում, մեկ դեսիտինից հետեւյալ փորձականացն-
ներում աշխան և գարնան վարերի դեպքում՝ այսքան
բերք է տվել (գթերով):

ԳՐԸՏԵՂԻ ՓՈՐՉԱԴԱՇՏԼ	Գարնան վարի	Աշխան վար
Վոլգովկայի փորձագաղութ (5 տար- վա միջին թվեր)	40,1	61,4
Բուլուկվայի փորձագաղութ (8 տարվա միջին տվյալներ)	32,6	56,6

Այսպիսով յեթե աշխանահերկ և կատարված, ապա
զարնանացան ցորենի բերքն ավելանում է մի դեպքում
50 տոկոսով, իսկ մյուս դեմքում՝ 73 տոկոսով:

Հետևապես բոլոր տարիներում դարնանացան բույ-
սերի բերքատվությունը բարձրացնելու տեսակետից
աշխանահերկի խոշոր առավելացները գարնան վա-
րի համեմատությամբ ակներև են:

Բայց բերքի բարձրացման տեսակետից ել ավելի
բարձր տոկոսներ են տալիս աշխանահերկը, համեմատած
գարնան վարի հետ՝ իսկա յերաշտոտ տարիների:

Այսպես որինակ՝ Կրասնիկուտի փորձագաղութում
յերեք շատ յերաշտոտ՝ 1912, 1917 և 1924 տարիներ են
(չոր գարուններով) մեկ հեկտարից գարնանացան ցո-

թենի այլքան բերք և ստացվել աշնան և գարնան վարչի
դեպում (3 տարվա միջին բերքը ցենտներով):

Գարնան վարի դեպում 2,7 ցենտներ,
աշնան վարի դեպում 5,3 ցենտներ:

Աշնանահերկը 96 տոկոսով շատ բերք և տվել դար-
նան վարի համեմատությամբ:

Զավազանց հետաքրքիր պատկեր և ստացվում,
յերբ առանձնացնում ենք 1924 թվի աշնան և գարնան
վարի տվյալները: Նրանց տված գարնանացան ցորենի
բերքի տարրերությունը միքանի հարյուր տոկոսով և
արտահայտվում: Ահա 1924 թվի բերքի թվերը՝

Քարնան վար	0,3	ցենտներ բերք մեկ հեկտարից
Աշնանավար	2,7	» » »

Ճիշտ և, աշնան վարի բերքն ել քիչ և, սովորական
միջին բերքից նա միքանի անգամ ցածր և, բայց չե-
մոր տվյալ պայմաններում նա 800 տոկոսով ավելի շատ
բերք և տվել, քան գարնանավարի հողամասը: Գար-
նանավարի բերքը փորձակայանում այնքան չնչին եր,
վորի հավաքելը (հաշվառման նպատակով) մեծ դժո-
վարություններով դլուխ բերդից: Ել չենք խոսում
այդ գրանի դյուզացիական ցանքսերի մասին, վորոնք
բառացի իմաստով խամճակում ելին հարավ-արեվելքից
այդ շրջանների վրայով անցնող հունիսյան չոր և տաք
քամիներից:

Մեր նախարենային վորոշ շրջանները (Կոտայքը,
Թալինը, Յեղվարդը և այլն) իրենց չորային պայման-
ներով (բայց վոչ հողային) շատ նմանություններ ունեն
վերև նշված չորային շրջանների հետ: Մեր այս շրջան-
ներում անջրդի հողամասերի բերքը տարրեր տարի-

ներում յեղանակների տարբերության հետևանքով յեն-
թարկվում և մեծ տատանումների: Յեթե գարունն ան-
ձրելային և լինում և անձրենները տեղում են նաև մա-
յա և և սառասթ ել հունիսի սկզբներին, թէ աշնանա-
ցաններից և թե գարնանացաններից համեմատաբար շատ
բերք և ստացվում, իսկ չորային գարուններին, հողի
անժամանակ և անկանոն մշակության հետեւանքով,
հունիս ամսին, յերբ սկսվում և հացահատիկների հաս-
կակալումն (այդ շրջաններում) այնքան չնչին քանտ-
կությամբ ջուր և լինում նրանց տրամադրության տակ,
վոր հունիսի վերջերի և հուլիսի սկզբների տոթերից ու
չորություններից՝ նրանք թառամում, չորանում և վո-
րնչանում են յերբեմն, կամ շատ չնչին բերք տալիս:

Ջրի պակասն այստեղ միշտ ել ունենում և կործա-
նարար հետեւնքներ: Յեվ այդպիսի հետեւանքներ կըս-
տացվեն այնքան ժամանակ, մինչև վոր արմատական
փոփոխան չյենթարկվեն հողի մշակության հին ձեե-
րը: Իսկ այդ փոփոխությունները կատարելու հնարա-
վորություններն ունենք: Կոլխոզ և սովորող շինարարու-
թյունն ե, վոր տալիս և լայն հնարավորություններ
այդ փոփոխությունները կատարելու և այն ել ամենա-
կարծ ժամանակամիջոցում: Իսկ փոփոխության ադրո-
տեխնիկական միջոցը՝ աշնանահերկն ե:

Յեվ յեթե այս տարի Յեղվարդի կոլխոզն ստանում
և չափաղանց առաջ բերք, զա առավելապես պետք և
վերագրել կոլխոզին, վորը 30 թվին բավականաչափ
հերկեր կատարեց և կառողացավ դրանով իսկ չնորհա-
լի կերպով ոգտագործել աշնան, ձմռան, ինչպես և այս
գարնան համեմատաբար տառատ տեղումները: Նույնպի-
սի խոչոր նվազումներ կարելի յե տեսնել մեր վորու-

կոլխողներում, վորոնք նույնական մեծ քանակությամբ աշնանահերկեր են կատարել:

6. ԱՇԽԱՆԱՀԵՐԿԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԺԱՄՄԱՆՍՎՐ ԿԱՏԱՐԻՌ ԱՇԽԱՆԱՀԵՐԿ ՀԵՆՑ ՎՈՐ ԲԵՐՔԸ ՀԱՎԱՔՎԱԾ Ե ԼԻՆՈՒՄ

Աշխանահերկը կատարելու ժամանակի հարցը վերին աստիճանի կարենոր հարց է: Դրանից ե կախված աշխանահերկերի և՝ բանվոր և՝ փրակը: Այսուղեղ վաղորոք նախատեսել աշխատանքն իր մանրամասնություններով և առանձնահատկություններով ու պատրաստ լինել բոլոր ուժերով ժամանակին կազմակերպվածությամբ աշխատանքն սկսելու, դա հենց այն ամենն է, վորը պահանջվում է աշխանահերկերի պլանները կատարելու համար: Ամեն մի սովորող, կոլխոզ և ՄՏԿ-ն պետք է հաշվի առնի այս կարենոր հանդամանքը:

Աշխանահերկի ժամանակի հարցը սերտորեն կազմած է հետեւյալ հարցերի հետ, վորոնց պետք են կատարել:

ա) Գարենացան կուլտուրաների ընդարձակումն և բ) կուլտուրական բույսերի վեգետացիայի (կյանքի) տելվողությունը:

Շնորհիվ կոլխոզ և սովորող շինարարության և ՄՏԿ-ների տարածմանը՝ մեծանում և մեր հնարավորություններն ամեն տարի ընդարձակելու ցանքսերի տարածությունը— տարեկան մոտավորապես 10-12%-ով: 22 թվին միմիայն բամբակի ցանքսերի տարածությունը 31 թվի համեմատությամբ աճելու յէ 100 % -ով: Աշխագին չափերով աճելու յէն մյուս տեխնիկական կուլ-

տուրաների, խոտաբույսերի և սիլոսաբույսերի ցանք սերի տարածությունները: Այլ խոսքով՝ 32 թվի դարնանացանի տարածությունն ընդարձակվելու յէ հսկայական չափերով: Այդ ընդարձակումը տեղի յէ ունենալու անմշակ և մասամբ ել ժամանակավորապես յերեսն ի վար գցած հողերի հաշվին: Մենակ բամբակի համար, ըստ Հողժողկոմատի որենտիվ—յէնթաղբական ավալների, 32 թվին պետք ե մոտավորապես 8.000 հեկտար, մինչև այժմ բոլորովին անմշակ դրության մեջ դանվող հողամաս հատկացվի (դեռ ճիշտ թըրքի վեր չկան, ըրջաններն ել չեն ուղարկել իրենց հանդիպական պլաններն այդ ուղղությամբ): Նույնը, տարբեր չափերով, վերաբերվում են նաև մյուս կուլտուրաներին և հացատիկներին: Յե՞րբ սկսել այդպիսի հողերի մշակությունը, նրանց վարը: Բոլորովին անմշակ դերի մշակությունը, նրանց վարը: Բոլորովին անմշակ դրության մեջ գտնվող, ինչպես և յերեսն ի վար գցած հողամասերը պետք ե վարել ինչքան հնարավոր և շուտ: Լավագույնը կլինի այն, զոր զարնանացանից անմիջապես հետո ուղարկել այս հողերի վարը: Այդ ժամանակ հողը պես համեմատարար խոնավ և լինում և վարելի ել դյուրին: Աս, կինոեր առում եմ, ամենալավը և դրան պետք ե ձգուել ամեն կերպ: Բայց դա չի նշանակում, վոր մյուս ամիսներին պետք ե այդ աշխատանքներին վերջ տալ: Բնակ ել չե մյուս ամիսներին, ինչպես և վաղ աշնան, այդ գործը յերբեք աչքաթող չպետք ե արվի, այլ այն պետք ե կատարել ուժերի մաքսիմալ լարմանք: Ընդհանրապես բոլոր գարնանացան բույսերին տրվելիք հողերը չպետք ե թողնել գարնանը, այլ պիտի վարել աշնանից (և մենք ցույց տվինք, թե ի՞նչու պետք ե այդպիս արվի), դա յել առավել սրությամբ տրվում ե անպես արվի:

մշակ և յերեսն ի վար գցած հողամասերի նկատմամբ : Պետք է նկատի առնել այն, ինչ ասլեց այս բրոշյուրի նախորդ գլուխներում հողի հասունացման մասին : Մեր մշակման մեջ գտնվող հողերի հասունացման համար պահանջվում է մերքանի ամիս, իսկ անմշակ հողերի նըկատմամբ հասունացման ժամանակամիջոցն ավելի յերկար պիտի լինի : Աւրեմն այս հողերի վարը պետք է կատարել ամրող տարրա մեջ և ինչքան չուտ այդ արվի, այնքան լավ : Ինչքան չուտ արեվի և ողի ազգեցության տակ մնա այդպիսի հողերի հերկը մինչև նրա վրա ցանքս կատարելը, այնքան նրա միջի վատ հառկությունները կանհետանան, այնքան նա կփխրանու (մանավանդ մեր ծանր կավային հողերը) և այնքան ել ապահով կլինի նրանց հասունացումը մինչև դարնանացանի սկսման ժամը :

Ինչ վերաբերում ե մշակության մեջ դանվող հողամասերի աշնանահերկի ժամանակին, ապա ինքնին հասկանալի յե, վոր նա սերտորեն կապված է այդ հողամասերը զբաղլցնող բույսերի առանձնահատկությունների հետ :

Բույսերի այն խումբը, վորը շուտ ե բոլորում իր վեղետացիան, որինակ, ինչպես աշնանացան և դարնանացան հացահատիկները, վորոշ տեսակի ցանովի միամյա խոտաբույսերը և այն, այսինքն՝ այն բույսերը, վորոնց բերքահավաքն սկսում է հունիսի վերջերից և շարունակում մինչև ողոսոտոսի 15-20-ը, բերքահավաքի հետ միասին անհրաժեշտ և խողանահերկ անել, այսինքն 5-10 սանտիմետր հաստությամբ հերկել հոռոշ 4 խոփանի գութաններով կամ բազմախոփ լուսչիւնիկներով, ինչեւ աշխատանքը կատարվում է տրակտո-

րի միջոցով : Դա, ինչպես շատ ժանրամասնությամբ առ սել ենք, մեծ նշանակություն ունի հողի խոնավությունը գոլորշիացումից պահպանելու, մոլախոտերի և վնասատուների դեմ կովելու, բուսական մնացորդները և մոլախոտերը հողի տակովը տալու և հողն որգանական նյութերով հարստացնելու համար :

Բայց դրանով յերբեք չպիտի ե բավականանալ . եկեց վոր մոլախոտերի սերմերը մեծ բանակուրյամբ ծլեցին և միջիչ ել բարձրացան հողի յերեսը՝ կատարել լրիվ խորությամբ աշնանահերկ : Յերե այդ չարշի, կամ կատարվի ուշ, ապա մոլախոտերը սերմեր կտան և արսափելի չափերով կիվարակեն դաշտերը : Զպետք ե մոռանալ, վոր կան այնպիսի մոլախոտեր, վորոնց մի բույսը կես միլին և դեռ ավել սերմ և տակիս մեկ անգամից : Բացի այդ, վնասատուները վոչնչացնելու, հող աննդանյութերով հարստացնելու, հողի ստրուկտուրան լավացնելու, հողում ջուր կուտակելու, մի խոսքով հողը հասունացնելու հարավորությունները պայմանավորված են աշնանահերկով : Խողանահերկից 1-ից մեկ ու կորված կես աշնանահերկով հարավանական պետք ե կատարել աշնանահերկ : Իսկ յեթե զանազան պատճառներով հնարավոր չի լինում բերքահավաքից հետո խողանահերկ առ շի մնում բերքահավաքից հետո խողանահերկ առ մինել, ապա աշնանահերկը չպետք ե ուշացնել : Բոլոր մինցները պետք ե գործադրել շուտ աշնանահերկել այդպիսի հողամասերն, թե չե թանկագին բուսական մնապիսի հողամասերն, թե չե առաջարկել առ պահանջման արեվի և այլ գործոնների աղդեցության առակ կանհետանան հողի յերեսից և հնարավոր չի լինելու հողն որգանական նյութերով հարստացնելու : Բացի դրանից, բերքահավաքից հետո, հողի յերեսը ծածկած միլիոնների հասնող մոլախոտերը կզարդանան շատ ա-

բագ և սերմեր կտարածեն հողում, իսկ վնասատուների հարսնյակներից կթռչեն թիթեռներ և կաղատվեն: Ինչ քու շուտ կատարվի աշխահաներկը, այնքան որու մեջ շատ սննդանյութեր և զուր կլուտակվի և այնքան ել բարձր բերք կտատնամի: Այսպես որինուկ տարբեր ժամանակվա վարերի գեղքում Սարատովի Հացահատիկային Տնտեսության ինստիտուտը 7 տարվա միջին տվյալներով գարնանացան ցորենի այսպիսի բերք և ստոցել մեկ հեկտարից ցենտներում:

Գարնան վարի գեղքում	6,8	100 տոկոսվ
Սեպտեմբերի վարի գեղքում	7,2	106 *
Ոգոսոսուի վարի գեղքում	7,7	113 *

Իսկ Պատառվայի փորձագալու 10 տարվա միջին տվյալներով՝	8,9	ցենտ: 100 տոկոսվ
Գարնան վարի գեղքում ստացվել ե	9,5	*
Սեպտեմբերի	13,0	*
Ոգոսոսուի	146	*

Եերկու դեկտեմբերին ել տեսնում ենք, զոր աշնան ամիսներին կատարած աշխանահերկի բերքը բարձր և գարնանալարի տված բերքից:

Բայց այն դեկտեմբեր, յերբ սեպտեմբերի հերկը 6,7 %-ով և ավելի բերք տվել գարնան վարի համեմատությամբ, ոգոսոսոսին կատարված հերկը, տվել է 46 տոկոսի աճում: Իսկ ինչ վերաբերում է այն հողամասերին, վորոնք զբաղված են մեր տեխնիկական կուլտուրաներով, զորոնց վեգետացիան ձգվում է մինչև ուշ աշուն, աշխահաներկը պետք է կատալի բերքահավաքից անիջապիս հետո: Այսուղ մեծ ծավալ ունեցող աշխատանիքն անիրածեցած է կատարել շատ կարն ժամանակամիջոցում: Խորհրդային Միության Հողժողկոմատի վորոշամբ Անդրկովկասում աշխանահերկերը պետք

ե ավարտվեն դեկտ: 1-ից վոչ ուշ: Դա առավելագես վերաբերում ե տեխնիկական կուլտուրաներին, գլխավորմագիս բամբակին: Պահանջվում ե, զոր մեր կոլխոզները, սովորողներն և Մ.Տ. Կայանները լարեն իրենց բոլոր ուժերն աշխանահերկելու բամբակի և այլ տեխնիկական կուլտուրաներին հասոկացվելիք տարածությունները: Մեծ ծավալով աշխանահերկի կատարումը մեր ները: Մեծ ծավալով աշխանահերկի պամբական վրամբական ըրջաններում, վճռողական նշանաբամբակործական ըրջաններում, զեկուր բամբակի պլանի իրակակություն ունի ծ3000 հեկտար բամբակի պլանի իրակակություն հացման համար: Մեր բամբակաղողծական վրամբակենների հողերի մեծ մասը ծանր հողեր են: Տարվա վերջում հողերի մասը ծանր հողեր են: Տարվա վերջում բամբակեննուց աղաւոված հողամասը խիստ կոչտացած է բամբակեննում, նրա Փիղիքական հատկությունները վատթալինում, նրա Փիղիքական հատկությունները և հասունացնում գարնանացանքի համար:

Բոլորովին կարիք չկա աշխանահերկել կարտոֆիլից, չաքարից ճակնդեղից աղաւովող հողամասերից, յեթե լից, չաքարից ճակնդեղից աղաւովող հողամասերից, յեթե հարկե նրանց վեգետացիայի ընթացքում մշակությունը տարվել է կանոնավոր և բերքահավաքի հետեւանքով նը տարվել է կանոնավոր և բերքահավաքի փողշինել ակավայսպիսի հողամասերն անհրաժեշտ ե փողշինել սկավառակալոր կամ զիկզակ փողշիներով և տրամադրել գարուակալոր կամ զիկզակ փողշիներովին:

7. ԳՅՐԻ: ՏԵԽՆԻԿԱՆ (ԽՈՐՈՒԹՅՈՒՆԸ,
ՇԵՐՏԻ ԼԱՑՆՈՒԹՅՈՒՆԸ)

Խոսելով աշնանահերկերի բազմաթիվ աղբոնոմիական առավելությունների մասին, վորոնք վճռողական նշանակություն ունեն բերքատվությունը բարձրացնելու տեսակետից, ինչպիսին ցույց տրվեց վերելում բազմաթիվ թվական տվյալներով. չի կարելի անոնես առևել վարի տեխնիկական կողմը: Ինչպես աշխանահերկ կատարելու ժամանակի բաց բողոքնելը, այնպես և անկանոն վարի կատարումը, կարող է շատ նվազեցնել աշխանահերկի եֆեկտը:

Մենք տեսանք, վոր աշխանահերկի բարձր բերքատվությունը հետեւանք եւ այն բանին, վոր աշխանահերկի մամենությ սկսած մինչեւ դարնանը— ցանքսի ժամանակ, հողն իր մեջ տեղի ունեցող մի շարք պրոցեսների չնորհիվ հասունանում եւ:

Ինչքան ժամանակին կատարվի աշխանահերկը, այնքան բարձր կլինի աշխանահերկի տված բերքը: Այդ բերքն եւ ավելի բարձր կլինի, յերեւ ժամանակին կատարված աշխանահերկը կանոնավոր ել վարված լինի: Կոպիտ սիսալ կատարած կլինելինք, յեթե դատեյինք վորմանց նման, վորոնք ասում են՝ «բամբական ժամանակամիջոց եւ աշխանից մինչեւ դարուն, ինչպես ել վարենք հողը, նա հասունանալու յե»: Զարեսք եւ շահագործել ժամանակը և ձմեռվա ազդեցությունները, վատացենելով վարի փորակը: Պետք եւ պարզ իմանալ, վոր ինչքան վարը կանոնավոր լինի, այնքան մեծ կլինի աշխանահերկի տված բերքը:

Վարի խորությունն ու շերտի լայնությունը տար-

բեր եւ առարբեր հողերի նկատմամբ, նա կախված է տարբեր հողերի առանձնահատկություններից:

Բացի զրանից, նայած թե ի՞չ բույսին ենք հատկացնելու հողամասեր, վարի խորությունն ել պետք ելինի տարբեր չափով, հացահատիկների համար սազր, տեխնիկական կուլտուրաների, ինչպես և ցանովի խոտարբույսերի համար՝ համեմատաբար խոր:

Մեզ մոտ բամբակնուն հատկացրված հողամասերի մեջ գերակշռող են ծանր կալվային հողերը: Այդ հողերը անհրաժեշտ եւ վարել 15-22 սանտիմետր խորությամբ, ավելին կարիք չկա: Ակոսի լայնությունը չպետք ե շատ մեծ լինի: Ինչքան հողամասը կոչտացած է, ինչքան հողի կապակցականությունն ուժեղ եւ արտահայտված, այնքան ել անհրաժեշտ ե վարի ժամանակ նեղ շերտ վերցնել: Մասն կավային հողերում 12-14 սանտիմետրից դեռ չպետք ե անցնի շերտի լայնությունը: Ինչքան շերտը նեղ լինի, այնքան շրջվելուց հողը լավ կմանը անա և շատ խոչոր կոշտեր չի տա:

Այսպիսի վարի աղբո-կուլտուրական նշանակությունը շատ մեծ է, վորովհետեւ միմիայն լավ փիրացած հողումն ե, վոր ողը, ջուրը և հողի մասնիկները գտնվում են միմյանց հետ անընդհատ շփման մեջ, վորպիսի դրությունը հողի հասունացման նախապայմանն է:

Մասնավորապես նեղ շերտով պետք ե վարել նոր մշակության մեջ մտցվելիք հողամասերը: Յերկար ժամանակով անմշակ մնալով, զուրկ անհրաժեշտ քանակությամբ ողից և ջրից, այս հողերի հատկությունները չափաղանց վատացել են: Կանոնավոր վարը տալով լավ փիրացած և փափկացած հող, նպաստում ե այն բանին,

վոր հողում առաջացած մեծ քանակությամբ ծակուտիկների մեջ մտնի և ոդը, և ջուրը, վորոնք մեծ աղողեցություն են գործում հողի վրա նրան լավացնելու ուղղությամբ։ Հատկապես մեծ և ոդի միջի մի զաղիթթվածնի գերը։ Ոդի բրդածինն ամենաուժեղ կերպով բայցայում և այդպիսի հողերի բունավոր միացությունները և ժամանակի ընթացքում մյուս գործուների հետ միասին, պիտանի յև դարձնում հողը մեր կուլտուրական բույսերի համար։ Զարգեց և կարծել, վոր ինչքան լայն շերտ կարել, այլին շատ տարածություն հնարավոր կլիմի վարել։ Լայն շերտը դանդաղեցնում և շարժիչի ընթացքը, պահանջում է ավելի շատ բաշառուժ քացից, վոր այդպիսի վարի վորակն ել վատանում է։

Նեղ շերտով վարելու դեպքում անհրաժեշտ և ոդտապործել բազմախոփ գութաններ, տրակտորի գութանների մեծ մասը հարմարեցված և այդ բանին, որինակ՝ Փորդոն, ոլլիվեր № 7 գութանը, Հոկտեմբերյան հեղափոխության անվան գործարանի ԱՏԴԲ 8-ը այն վեցցնում են 12-14 սանտիմետր լայնությամբ շերտ։

Բացի դրանից, անհրաժեշտ և մեծ չափերով, գործածության մեջ զնել նախախոփավոր թե տրակտորի և թե ձիան-յեղան գութանները, դա ունի այն առավելությունը, վոր հողի մակերեսի 5-8 սանտիմետր հաստության շերտը, վորի ստրուկտորան շատ և փշացել անձրիվներից, ջրելուց և այլն— կտրվում և նախախոփով և հողի մակերեսի բուսական մնացորդների հետ զցվում և ակոսի ճիշտ հատակին ու նրա ստրուկտորան որդանական նյութերի քայլայման, ինչպես և խոնավության

պայմաններում, վերականգնվում է, իսկ նախախոփի լոցային արդեն գնում է իսկական խորությամբ հող կտրող հետո արդեն գնում է ակոսի տակ ընկած խոփը, վորը կտրված հողը դցում է ակոսի տակ ընկած խոփը, վորը կտրված հողը դցում է ակոսի տակ ընկած խոփի վրա։

Մյուս շարքահերկ բույսերի համար ևս, հողը պետք է խոր վարված լինի 18-20 սանտիմետր։ Հացահատիկ-կեր խոր վարված լինի 12-15 սանտիմետր խորությունը լիովին ների համար 12-15 սանտիմետր խորությունը լիովին բավական է։

Թեթև հողերը պետք են վարել ավելի լայն շերտ լինդհանրապես հողը միանդամից խոր վարել այնպիսի գութաններով, այսինքն այնպիսի գութաններով, վորոնց խոփը լայն է։ Կարելի յև վարել նաև արով, վորոնց խոփը լայն է։ Կարելի յև վարել ավելի խոր, քան ծանր կալվային հողերը, յեթե վարելավելի խոր, քան ծանր կալվային հողերը։

Ընդհանրապես հողը միանդամից խոր վարել չենդինդամից խոր վարել աստարել աստիճանաբար, այն ել կարելի, այլ ուետք են կատարել աստիճանաբար, ասհմանը կախված է մինչև վորուց սահման, իսկ այդ սահմանը հողի յենթաշերտի կազմությունից։

Աշնանահերկը փոցինելու վոչ մի անհրաժեշտություն չկա, դա ավելորդ աշխատանք է և անցանկալի, թյուն չկա, դա ավելորդ աշխատանք է և անցանկալի, վորովհետև աշնանահերկերի նպատակներից մեկն ել վորովհետև աշխատակի հակոսակի մեջությունը և ակոսայն է, վոր ակոսները պահեն ձմեռված ճյուղը և ակոսայն է, վոր ակոսները պահեն ձմեռված ճյուղը և կուտակվի հողի մեջ։ Յեների միջոցով ջուրը ծծվի և կուտակվի հողի մեջ։ Յեները կատարվել են կանոնավոր, մնացած բոլոր կուտակված վարը կատարվել են մինչև դարձնան, թե ահերը մահրանում, վիրանում են մինչև դարձնան, թե ահերը մահրանում, վիրանում են խոնավությունից և թե ձմռան աշնան որերի արելից ու խոնավությունից և թե ձմռան աշնան որերի արելից ու խոնավությունից և թե ձմռան

առանձանի գներից։ Այսպես որինակ Խարկովի փորձադաշտն այսպիսի թվեր են տալիս զարու հատիկի և ծղոտի բերքի նկատմամբ աշնանից փոցինելու համար աշխատակի համար աշխանահերկե-

բե վրա (12 տարվա միջին թվեր, հեկտարից, ցենտ-ներով),

<i>Համականք</i>	<i>Տրված</i>
Աշխանելից փողինված	9,3 15,4
Աշխանից չփողինված	9,5 15,9

Գարսնը բացվելուն պես, յերք հողի յերեսը դիւնոյ և սկսել փխրանալ, անիրաժեշտ է փոցիսի հողամասը, վերցնել խորդուրորդությունները։ Դա նրա համար է, վոր խորդուրորդությունները հավասարվի, պակասի հողի գոլորչիացնող մակարդակիր և կուտակված խոնավությունը մնա հողի մեջ։ Բացի զրանից, փոցիւր փափուկ հողից դուրս և թերում տակոիքավոր մոլախոտերին և վոքչացնում վաղ գարնան ծլած մատղաշ մոյախոտերը։

Այս բոլորից հետո հասունացած հողամասի վրա իր ժամանակին սկսվում է գարնանացանքը:

8. ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բոլոր գարնանցան բույսերի հողամասերն աւ-
իրաժեշտ ե վարել աշխանից :

Հայութի կամքից ազատվող հռդամասերը խո-
զանակերկել բերքահավաքի հետ միասին և մեկ, մեկ
ու կես ամսից հետո անպայման լրիվ խորությամբ աշ-
խանակերկ կատարել:

3. Տեղական և այլ կուտուրաներից ազատվող հողամասերն աշխատելի բերքահավաքից անմիջապես հետո՝ լրիվ խորությամբ:

4. Բոլոր կուլտուրաներից ազատվող հոդամասերի աշնանակերկն ինչքան շուրջ կատարել, այնքան լավ:

5. Նոր մշակության մեջ մոցվելիք հողամասերի (դոկտ., չիմաններ և այլն) վարք պետք է սկսել գար-նահից :

6. Աշնանահերկը փոցլսել միտք չունիք: Բայց անհրաժեշտ է անպայման փոցլսել վաղ գարնանից, յերբ հոնի մակերեսն սկսում է չորանալ:

7. Միտք չկա աշնանահերկելի պալարապտութեա-
բից և արմատապտուղներից ազատվող հողամասերը :
Սրանց նկատմամբ բավարարվել միմիայն գարնան փոց-
խով :

8. Ժամանակին կանոնավոր կտրարված աշնաւա-
հերկը հողի տակովն անելով բռնական մնացորդները
և մոլախոտերը, լավացնելով հողի ստրոկուրան,
կուտակելով ինսավորյուն և սննդանյութեր, մա-
սայական վոչնչացման յենքարկելով մոլախոտերին և
վնասառութիւնն 25-30 և ե՞լ ավելի բարձր տոկոսնե-
րով բարձրագույն և բերքատվությունը:

9. Աշխատահերկը հնարավորություն և տակիս գար-
նահացան կուլտուրաների ցամքոր կատարել իր ժամա-
նակին, վորք վեռական նշանակություն ունի բերքատ-
վուածամբ սարքագիման համար :

10. Աշխանահերկը նպաստում և ցանխսերի տարածությունների ընդարձակմանը: Նրա դերը մասնավորապես բացառիկ և բարեկալի տարածություններն ընդուրածակելու տեսակետից:

11. Աշխանահերկը յերաշտի դեմ կովելու փորձագալակացության վեհապետ է : Աշխանահերկը ցեղային սիստեմի կողմանուն անվանաւարիմելի միջոցն է :

30

Հետեւապես՝ 12. ագրոտեխնիկական այս սուազ-
նակարգ միջոցը — ԱՇՆԱՆԱՀԵՐԿԸ, պետք է դառնա
սոցիալխոսական յերկրագործության գարնանացան
կալուսուրաների, եռդի մշակության սիստեմը :

ԴԵՊԻ ԳՈՐԾ

Յեղնելով աշնանահերկի վիթխարի պլանների կա-
ռարժան և գերակատարման նշանաբանից, անհրաժեշտ
է առանց ժամանակ կորցնելու, աշխատանքի սոցիալխո-
տական ձեվերով՝ սոցմշցմամբ և հարգվածայնությամբ
արտադրական բոլոր անհրաժեշտ միջոցներով՝ տրակ-
տորներով, ծիերով, յեզներով, գութաններով և այլն—
կոլխոզների, սովխոզների, մեքենատրակտորային կա-
յանների, ինչպես և անհատական վաղվա կոլխոզնիկ,
չքավոր և միջակ աշխատավորական 10-նյակ հազարա-
վոր մասսայով, ծավալել աշնանահերկերի տարածու-
թյունը բոլոր շրջաններում անխորի բոլոր գարնանա-
ցան բույսերի համար :

Կոլխոզներն ու սովխոզները պետք ե հաշվի առնեն
հողային պայմանները, քաշող ուժերի կացությունը,
վարի վորակն ու քանութը և ըստ այնմ ճիշտ կերպով
վճռեն վարի նորմաները և անշեղ կենսագործեն գոր-
ծարքային սիստեմով մարդունիս վրա նայելով իբրեւ աշ-
նանահերկերի կայունման գործանակի նախազայման-
ներից մեկի:



ՀՀ Ազգային գրադարան



NL0938978

Գիւզ 10 Կ. (2 մ.)

3976



Ա. ԳЮԼԱՆՅԱ
ՅԱՅԼԵՎԱՅ ՎԾՊԱՇԿԱ

Գոսизդատ ССР Армения
Эривань—1931